



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

367

№-509

ՄԱՆՐՈՅ

ԿՐՕՆԻ ԳԻՐԲ

ՖԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ

ՏՕՆԵՐ, ԱՌԱՔԵԱԼՆԵՐ

ԳԻՐԲ Բ.

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԱԿԵՐԱՑՈՒՄԸ ԱԶԳ. ԿԵԳՐ. ԿՐՕՆ. ԺՈՂԱԳԷՆ

ԳՐԱՏՈՒՆ «ՄԵՍՐՈՊ»,

ՍՈՖԻԱ, ԲԱՎԼՈՎՕ

1932

2(075)

Մ-29

2(075)

Կ-29

ՄԱՇՔՈՑ



ԿՐՕՆԻ ԳԻՐՔ

ՖԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ

ՏՕՆԵՐ, ԱՌԱՔԵԱԼՆԵՐ



ԳԻՐՔ Բ.

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ ԱԶԳ. ԿԵԴՐ. ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԵՆ



Ս Ո Ց Ի Ա

Բ Ա Վ Լ Ո Վ Օ

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

1932

2010

4 1 0 0 1



ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ



Ա. ԿԱՍ




ԶԱՔԱՐԻԱՅԻ ԱԻԵՏՈՒՄԸ

Յուզայի երկրին մէջ Զաքարիա անունով սուրբ քահանայ մը կար, որուն կնոջ անունն էր Նղիսաբեր: Անոնք երկուքն ալ ծեր էին և որդի չունէին:

Զաւակ ունենալու համար շատ անգամ աղօթքը բաժ էին, բայց իրենց այնպէս կուզար թէ Աստուած չէր լսեր իրենց աղօթքներուն:

Բարեպաշտ և աստուածավախ էին երկուքն ալ: Անգամ մը Զաքարիա Երուսաղէմ եկաւ Տիրոջը տաճարին մէջ խունկ ծխելու և իր քահանայի պաշտօնը կատարելու համար:

Երբ Զաքարիա բուրվառը ձեռքը վարագոյրէն ներս մտաւ և դէպի Խնկոց սեղանը յառաջացաւ, յանկարծ սեղանին մէկ կողմը անսաւ հրեշտակ մը:



Զափարիայի Աւեսոււմը

Զաքարիա շատ վախցաւ, բայց հրեշտակը զինքը քաջալերեց և ըսաւ.

— Մի՛ վախնար, Զաքարիա՛, Աստուած ազօթքդ լսեց. եղիտարեթ կինդ զաւակ մը պիտի ունենայ, որուն անունը Յովհաննէս պիտի դնես: Անքեզի համար մեծ ուրախութիւն պիտի ըլլայ: Իսրայելացիներէն շատերը Աստուծոյ պիտի առաջնորդէ, Աստուծոյ ժողովուրդ պիտի պատրաստէ:

Զաքարիա իր ծերութեան վրայ մտածելով, տարակուսեցաւ և ըսաւ.

— Ես արդէն ծերունի եմ և կինս ալ տարիքոտ է, ի՞նչպէս կարելի է այդ:

Հրեշտակը պատասխանեց.

— Ես Գաբրիէլ հրեշտակն եմ. զրկուեցայ քեզի այս աւետիսը տալու համար: Բայց որովհետև հաւատացիր իմ խօսքին, համար պիտի ըլլաս մինչև այն օրը՝ երբ պիտի կատարուին իմ ըսածները:

Հրեշտակը աներեւոյթ եղաւ: Զաքարիա պապանձեցաւ, չէր կրնար խօսիլ:

Բ. ԳԱՍ

ՄԱՐԻԱՄԻ ԱՒԵՏՈՒՄԸ

Գալիլիայի մէջ Նազարէթ անունով քաղաք մը կար: Հոն կը բնակէր բարի, հեզ կոյս մը, որուն անունն էր Մարիամ:

Մարիամ շատ աղքատ էր, բայց բարի խորհուրդներով հարուստ էր: Նշանուած էր բարի մարդու մը հետ, որուն անունն էր Յովսէփ: Ան ալ աղքատ հիւսն մըն էր, որ Մարիամին նման Դաւիթի սերունդէն էր:

Օր մը, երբ Մարիամ իր սենեակին մէջ ա-

տանձին կ'աղօթէր, հրեշտակ մը երեւցաւ անոր և ըսաւ .

— Ողջոյն քեզ, Մարիա՛մ, շնորհալի աղջիկ, Տէրը քեզի հետ է, դուն օրհնուած ես :

Մարիամ շփոթեցաւ և սկսաւ մտածել :

Հրեշտակը ըսաւ .

— Մի՛ վախնար, Մարիա՛մ, Աստուծոյ առջև շնորհ գտած ես . որդի մը պիտի ծնանիս և անոր անունը Յիսուս պիտի դնես : Անիկա մեծ պիտի ըլլայ և Աստուծոյ Որդի պիտի կոչուի :

Մարիամ հարցուց .

— Ի՞նչպէս կարելի է, որովհետև ամուսնացած չեմ :

Հրեշտակը պատասխանեց .

— Սուրբ Հոգին պիտի իջնէ քու վրայ : Անա Եղիսաբեթը քու ազգականդ ալ իր տարիքոտ վիճակին մէջ պիտի ծնանի որդի մը, որովհետև Աստուծոյ համար անկարելի բան չկայ :

— Անա ես Աստուծոյ ազախինն եմ, թող քու ըսածին պէս ըլլայ, ըսաւ Մարիամ :

Հրեշտակը մեկնեցաւ :

Գ. ԳԱՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶԻ ԾՆՈՒՆԴԸ

Քիչ ետքը Եղիսաբեթ ծնաւ որդին : Իրենց ազգականները և դրացիները կ'ուրախանային ծնողքին հետ և կ'ուզէին անուն մը դնել :

Անոնք կ'ուզէին հօրը անունով Զաւարիա կոչել մանուկը : Բայց Եղիսաբեթ կը պահանջէր որ Յովհաննէս դրուի անոր անունը : Ապա խնդրեցին որ Զաքարիա յայտնէ իր ուզած անունը :

Զաքարիա միշտ համր էր . նշաններով ուզեց տախտակ մը և վրան սկսաւ գրել . «Անոր անունը Յովհաննէս է» : Նոյն վայրկեանին լեզուն բացուեցաւ և սկսաւ խօսիլ : Ամէնքն ալ լեցուեցան երկիւղով և ըսին .

— Ի՞նչ պիտի ըլլայ այս աղան :

Այն ատեն Զաքարիա լեցուեցաւ Սուրբ Հոգիով և ըսաւ .

— Օրհնեալ ըլլայ Տէրը, Իսրայէլի Աստուածը, որովհետև այցելեց իր ժողովուրդին և կատարեց իր խոստումը որ Աբրահամին տուած էր : Եւ դո՛ւն ազա՛ս, պիտի կոչուիս Բարձրեալին Մարգարէն . դուն պիտի քալես Տիրոջը առջեւէն, Անոր ճամբաները պիտի պատրաստես :

— Մի՛ վախնաք, ես եկայ ձեզի աւետերու մեծ ուրախութիւն մը, որ բոլոր ժողովուրդներն ալ պիտի զուարթացնէ: Այս գիշեր Բեթղեհէմի մէջ ձեզի Փրկիչ մը ծնաւ: Մտուրին մէջ պիտի գտնէք խանձարուրով պատուած մանուկը:

Այս միջոցին, հրեշտակներու բազմութիւն մըն ալ երեւցաւ, որոնք կ'օրհնէին Աստուած և կ'ըսէին.

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Հրեշտակներու երկինք վերանալէն ետք, հովիւները որոշեցին երթալ քաղաք և հասկնալ թէ ի՞նչ է պատահեր: Փութով եկան և տեսան Յովսէփն ու Մարիամը և փոքրիկ մանկիկը:

Բարի հովիւները յարգանք յայանեցին մանուկին և ամէն կողմ կը պատմէին:

Ութ օր ետք մանուկին անուն դրին և կոչեցին Յիսուս, որ կը նշանակէ Փրկիչ:

Ե. ԳԱՍ

ՄՈԳԵՐՈՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

Յիսուս ծնելէն ետք, Արևելքէն Երուսաղէմ եկան երեք թագաւորներ, որ մոզ էին, այսինքն իմասունք*): Այս թագաւորները կ'ըսէին.



Ասղը կ'առաջնորդէ մօզերը

— Ո՞ւր է Հրեաներուն թագաւորը, որ նոր

*) Հայկական աւանդութեան համեմատ, այս բազաւորներուն անուններն էին ՄԵԼՔՈՆ, ԳԱՍՊԱՐ և ՊԱՂՏԱՍԱՐ:

ծնուաւ. որովհետեւ Արեւելքի մէջ մենք տեսանք ասոր աստղը և եկանք անոր երկրպագելու:

Այդ ժամանակ Հրեաներուն թագաւորն էր Հերովդես, որ ազգով Հրեայ չէր. ան թագաւոր եղած էր խորամանկութիւնով և Հռովմայեցիներուն կայսեր շնորհիւ: Հերովդէս երբ լսեց թէ Հրեաներուն թագաւոր մը ծներ է, խռովեցաւ: Բոլոր Երուսաղէմցիները անոր նման յուզուեցան:

Հերովդէս հաւաքեց բոլոր հրեայ ուսուցիչները, քահանայապետներն ու մեծերը, և ուզեց իմանալ թէ՛ իրենց թագաւորն ո՞ւր պիտի ծնի, մարգարէներն ի՞նչ ըսած են: Անոնք պատասխանեցին.

— Պիտի ծնի Բեթղեհէմի մէջ, Յուդայի սերունդէն, որովհետեւ Միքիա մարգարէն այսպէս մարգարէացած է:

Այն ատեն, Հերովդէս՝ դաղաւկ իր մօտ կանչեց երեք մտերը և անոնցմէ հարկ եղածը անդեկանալէ ետք, ըսաւ.

— Գացէք, մանուկը փնտռեցէք, և եթէ գտնէք, ինձի ալ իմացուցէք, որպէսզի ես ալ անոր երկրպագութիւն ընեմ:

Մտերը խոտաացան ու մեկնեցան: Գիշերը դարձեալ տեսան զիրենք առաջնորդով աստղը, որ զանոնք տարաւ Բեթղեհէմ և կեցաւ Յիսուսի զանուած տան վրայ:

Երեք թագաւորները տեսան մանուկը և երկրպագեցին. ապա բացին իրենց պարկերը և անոր

նուէր տուին սպի, կնդրուկ և զմուսս: Գիշերը մնացին Բեթղեհէմ. տեսիլքի մէջ հրեշտակը անոնց պատուիրեց շիտակ երթալ դէպի Արեւելք, առանց հանդիպելու Հերովդէսին: Անոնք հնազանդեցան ու մեկնեցան:

Ձ. ԿԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Ծնունդէն 40 օր ետքը, Յովսէփ և Մարիամ գացին Երուսաղէմ, սովորութեան համեմատ Յիսուս մանուկը ընծայելու Տիրոջը:

Անոնք իրենց հեա բերին զայդ մը ասարակ, զսնելու համար Ասսուճոյ տաճարին մէջ:

Այդ ժամանակ Երուսաղէմի մէջ կ'ապրէր ծերունի մարդ մը, որուն անունն էր Սիմեոն: Արդար և աստուածավախ մարդ մըն էր ան, որ կը սպասէր Փրկչի գալստեան: Սուրբ Հոգին յայտնած էր իրեն թէ պիտի չմեռնէր մինչև որ Տիրոջը Օծեալը չտեսնէր:



Միմեոն կ'օրհնէ Յիսուսը

Սուրբ Հոգիէն թելադրուած ան եկաւ սաճարը, ուր եկած էին Մարիամ և Յովսէփ: Տեսնելով մանկիկը, առաւ իր ձեռքերուն մէջ, սկսաւ օրհնել Աստուած և ըսել.

— Տէ՛ր, այլեւս արձակէ քու ծառադ խաղաղութեան մէջ, քանի որ քու խօսքիդ համեմատ, իմ աչքերս տեսան Փրկուածիւնը: Ես աեսայ լոյսը որ պիտի լուսաւորէ հեթանոսները:

Միմէոն օրհնեց նաև մանուկին ծնողքը և ըսաւ Մարիամին.

36818 22
36818-66

— Այս աղուսն պատճառով վիշտին սուրը պիտի ծակէ քու սիրտդ:

Այդ տանն սաճարը կը դանուէր նաև Աճճա մարդարէտէին, որ 84 տարեկան ծերունի կին մըն էր և պահք ու ծոմ կը պահէր, չէր հեռանար սաճարէն: Ան ալ տեսնելով Յիսուսը սկսաւ օրհնել Տէրը և մանուկին վրայ կը խօսէր շատերուն:

ԸՆԹԵՐՅՈՒՄ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶԻ Տօնը յիշատակ է Յիսուսի ընծայումին: Հրեաները սովորութիւն ունեին ամեն անգրանիկ արու զաւակ՝ ծնանելէն ֆանի մը օր ետքը՝ անունը դնել ու սանարը անիլ, Ասուծոյ նուիրելու համար: Մէկ երկու աղաւնի կամ զոհի ուրիշ կեցողանիներ կը անեին իրենց հետ՝ սանարին մէջ զոհելու. ֆանանան աղօթքներ կը կարդար նորածին մանուկին վրայ, կ'օրհնէր զայն եւ կը յանձնէր իր ճնողքին:

Յիսուսի մայրն ալ, երկու աստուածացի առած, գնաց



սանար, այդ սովորութիւնը կասարելու: Հո՛ն, սանարին մեջ, Սիմեոն անուն ծերունի քահանայ մը գիրկն առաւ Յիսուս մանուկը, օրհնեց զայն եւ յայնեց թէ Յիսուս սպասուած Մեօթա Փրկիչն է:

Հայերը հին ասէն ունէին Տիր անունով ասուած մը, որ գիտութեան եւ իմասութեան ասուածն էր: Ունէին նոյնպէս Միհր անունով կրակի ասուած մը: Այս երկու ասուածներուն տեղը կը կասարէին կրակի խարոյկներ սարելով:

Երբ որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Քրիստոնէութիւնը մտցուց Հայոց մեջ, Հայոց Տիր եւ Միհր ասուածներուն այդ տեղը փոխեց եւ անոր տեղ հաստեց Տեառնընդատաջի տօնը: Այդ պատճառով հայաստանցի Հայերը այս տեղը կը կոչեն նաեւ Տէ՛ՐԸՆՏԱՍ, ու կրակի խարոյկներ կը սարէին:

Տեառնընդատաջ կը նշանակէ Տիրոջը տոջև. այսպէս կոչուած է, որովհետեւ Սիմեոն Ծերունին սանարին մեջ Յիսուսի առջեւը ելաւ ու գրկելով օրհնեց զայն:

Աւանդութիւնը կ'ըսէ թէ Սիմեոն կը սպասէր Մեսիայի գալուստին եւ Ասուծմէ խնդրած էր չտեսած չմտնի. այդ պատճառով ապրած էր հարիւրաւոր տարիներ:

Է. ԿԱՍ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս Փ Ա Խ Ո Ւ Ս Տ Ը


Հերովդէս անտնելով որ մոզերը չդարձան, շատ բարկացաւ: Ան հրաման ըրաւ Բեթղեհէմի մէջ դըտնուած երկու տարեկանէն վար բոլոր մանուկները



Յիսուսի Եգիպտոս փախուսը

տէ անցնել: Կը խորհէր որ անոնց մէջ մեծոցած կ'ըլլար նաև նորածին մանկիկը:

Բայց Տիրոջը հրեշտակը երեւցաւ Յովսէփի երազին մէջ և ըսաւ անոր:



— Ե՛լ, ա՛ռ մանուկը և մայրը, ու փախիր Ե-
գիպտոս. հոն կեցիր մինչև որ ես քեզ անկէ կո-
չեմ, որովհետև Հերովդէս կ'ուզէ սպաննել փոքրիկը:

Յովսէփ հնազանդեցաւ ու գիշերով առաւ ման-
կիկն ու մայրը և դնաց Եգիպտոս:

Հերովդէսի դահիճները անմիջապէս գացին
Բեթղեհէմ. մայրերուն գիրկէն խլեցին մանուկնե-
րը և սպաննեցին:

Քիչ ետքը՝ խղճի խայթէն տանջուած՝ մեռաւ
Հերովդէս: Տիրոջ թելադրութեամբ, Յովսէփ առաւ
դարձեալ մանուկն ու մայրը և եկաւ ընակեցաւ
Գալիլիայի Նազարէթ քաղաքը:


Ը. ԳԱՍ

ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Յիսուսի ծնողքը ամէն տարի Երուսաղէմ կ'եր-
թային Չաակի տօնը կատարելու համար: Երբոր Յի-
սուս 12 տարեկան եղաւ, անոնց հետ ընկերացաւ:

Երբ Չաակիը աւարտեցաւ, ուխտաւորներու
կարաւանը ճամբայ ելաւ: Յիսուսի ծնողքն ալ միա-
սին մեկնեցան: Ճամբան զարմանքով տեսան որ
Յիսուս հետերնին չէր, Երուսաղէմ մնացեր էր:

Շատ փնտոցին, ծանօթներու հարցուցին և
մտանոգ վիճակի մէջ ետ դարձան Երուսաղէմի մէջ
փնտոելու համար:



Յիսուս Մանուկը Տանարին մէջ

Երեք օր ետքը գտան զայն տաճարին մէջ: Ան
նստած էր ուսուցիչներուն, վարդապետներուն մէջ,
անոնց մտիկ կ'ընէր և հարցումներ կ'ընէր: Բոլոր
զինքը լսողները կը զարմանային անոր իմաստու-
թեան վրայ:

Մարիամ տեսնելով Յիսուսը ըսաւ.

— Որդեա՛կ, այս ի՞նչ ըրիր, երեք օրէ ի վեր քեզ կը փնտոէինք:

— Ինչո՞ւ կը փնտոէիք, պատասխանեց Յիսուս, դուք չէի՞ք գիտեր սր ես իմ հօրս տան մէջ պէտք է ըլլամ:

Ամէնքը մէկ դարձան նազարէթ: Յիսուս կը մեծնար և միշտ իր հօրն ու մօրը հնազանդ կ'ապրէր: Յետոյ սկսաւ իր ծնողքին օգնել՝ աշխատելով:

Թ. ԴԱՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶ

Յովհաննէս Մկրտիչ կը բնակէր անապատը: Երկար տարիներ հոն ազօթքով և ճգնաւթեամբ անցնելէ ետք, Յորդանան գետին եզերքները եկաւ և սկսաւ քարոզել:

Ան հազած էր ուղտի մազէ շինուած զգեստ մը ու մէջքը կապած էր կաշիէ գօտի մը: Կ'ապրէր ուտելով մարախ ու վայրի մեղր:

Ամէն կողմերէ սկսան մարդիկ գալ և իր քա-

րողութիւնները լսել: Անոր ճգնաւորի խիստ կեանքը (խստամբերութիւնը) տեսնելով և լսելով անոր խօսքերը, ամէնքն ալ կը հիանային անոր վրայ: Բոլորն ալ մեծ մարգարէ մը կը դաւանէին զայն: Շատերն ալ կը կարծէին թէ՝ Յովհաննէս մարգարէներէն ալ վեր մէկն է, Քրիստոսն է: Բայց Յովհաննէս իմանալով անոնց միտքը, կ'ըսէր.

— Ես չեմ Քրիստոսը, այլ անոր կարապետն եմ: Անիկա արդէն աշխարհ եկած է և ձեր մէջն է: Ես անոր քով ոչինչ եմ. անոր կօշիկներուն կապերն անգամ քակելու արժանի չեմ:

Յովհաննէս միշտ կը քարոզէր և կ'ըսէր.

— Ապաշխարեցէ՛ք, որովհետեւ երկինքի թագաւորութիւնը մօտեցած է:

Շատերը անոր կը հաւատային, կը հնազանդէին անոր պատուէրներուն, կ'ապաշխարէին և կ'ազօթէին: Յովհաննէս կը մկրտէր զանոնք Յորդանան գետին մէջ:

Անգամ մը, Փարիսեցիներէն և Սադուկեցիներէն մէկ քանի հոգի Յովհաննէսի քով եկան: Փարիսեցիները Հրեաներուն կարգացողներն էին, անոնց վարդապետներն էին, կեղծաւոր, շողաքորթ, խաբէրայ մարդեր էին: Նոյնպէս էին Սադուկեցիները: Ասոնք չէին հաւատար արքայութեան, հօգիի, հրեշտակի. կ'ըսէին թէ ո՛չ պատիժ կայ ո՛չ վարձատրութիւն:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Յիսուսի Ծնունդեան եւ Մկրտութեան տօնը միասին կը կոչուին *Տօն Աստուածայայտնութեան*, որովհետեւ 'Քրիստոս' Աստուծոյ որդին ինկզիմէր յայտնեց մարդոց իբրեւ մարդ ծնելով եւ մկրտելով:

Բերդեհեմի մեջ հրեշտակները աւետեցին հովիւներուն եւ մարդոց թէ Աստուածամարդ մը ծնաւ: Նոյնպէս Յիսուսի Մկրտութեան ժամանակ, Աւետարանը կ'ըսէ, թէ երկիւմէր բացուեցաւ, Ս. Հոգին աղանձի ի կերպարանօքով իջաւ Յիսուսի վրայ, ու երկնային ձայն մը ըսաւ. "Այ է իմ որդին":

Յոյներն եւ Կաթոլիկները Յիսուսի Ծնունդը եւ Մկրտութիւնը կը տօնեն տարբեր ժամանակներ: Հայ եկեղեցին Ծնունդը եւ Մկրտութիւն միասին կը տօնէ Յունուար 6ին: Յոյն եւ Կաթոլիկ եկեղեցիները Յիսուսի Ծնունդը կը տօնեն Դեկտ. 25ին, իսկ Մկրտութիւնը՝ 6 Յունուարին: Սակայն Կաթոլիկ եկեղեցին նոր տոմարով, Յոյներն ալ հին տոմարով տօնելուն համար միեւնոյն օրը չեն տօնախմբէր:

Հին ասեմ բոլոր եկեղեցիներն ալ այս երկու տօները միասին կը տօնէին: Բայց Դ. դարուն, նկատելով որ միեւնոյն օրը թէ՛ Բերդեհեմի մեջ եւ թէ Յուդանան գետին վրայ անկարելի էր հանդեսներ կատարել, մէկ տօ-

ղեմ միւս տեղը շատ հեռու էր, այդ պատճառով եկեղեցւոյ մեծերը, որոնք երուսաղեմ կը գտնուէին, որոշեցին այս երկու տօները իրարմէ բաժնել: Անկեց ի վեր Յոյն եւ Կաթոլիկ եկեղեցիները զատ զատ կը տօնեն: Իսկ Հայ եկեղեցին հին սովորութիւնը պահէր եւ միասին կը տօնէ:

Յիսուսի Ծնունդը եւ Մկրտութիւնը տօնելով, ամեն հաւատացեալ պէտք է յիշէ թէ Աստուած սիրեց մեզ եւ խոնարհեցաւ որ մեզ բարձրացնէ: Ան եկաւ աշխարհ, որ մարդիկ իր սալիք պատուերները գործադրեն եւ խաղաղութիւնը սիրէ երկրի վրայ:

ԺԱ. ԴԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

Մկրտութենէն ետք Յիսուս քաջուեցաւ անապատին մէջ. ինքզինքը տուաւ աղօթքի: Քառասուն օր եւ քառասուն գիշեր ծոմ կեցաւ, բնաւ բան մը չճաշակեց:

Փորձիչ սատարեան մօտեցաւ այն ատեն Յիսուսին, և ըսաւ.

— Եթէ Աստուծոյ որդի ես, սա քարերուն քսէ՛ որ հաց ըլլան:

Յիսուս պատասխանեց.

— Ո՛չ, մարդ միայն հացով չսպրիւր, այլ Աստուծոյ խօսքերով:

Սատանան կրկին փորձել ուզեց անիկա՛ ըսելով.

— Եթէ Աստուծոյ Որդի ես, դնա՛ վար ձգէ ինքզինքը Երուսաղէմի սաճարին ամէնէն բարձր աշտարակէն: Որովհետեւ Ս. Գիրքին մէջ գրուած է թէ՛ Աստուած պատուիրած է իր հրեշտակներուն որ զքեզ ձեռքի վրայ բռնեն և չըլլայ թէ սաքերդ քարի զարնուին:

Յիսուս ասոր ալ պատասխանեց.

— Ս. Գրքին մէջ գրուած է. «Բու Տէր Աստուածդ մի՛ փորձեր»:

Սատանան դարձեալ ուզեց փորձել, Յիսուսը բարձր լերան մը վրայ հանելով, ուսկից կը տեսնուէր աշխարհի բոլոր թագաւորութիւնները, հարստութիւնները և փառքը: Սատանան խօսեցաւ Յիսուսին և ըսաւ.

— Այս բոլորին աէր պիտի ըլլաս, եթէ ինծի երկրպագութիւն ընես:

Այն ատեն Յիսուս ըսաւ.

— Ետիս դնա՛, սատանայ, որովհետեւ Ս. Գիրքին մէջ գրուած է որ միայն Աստուծոյ երկրպագել պէտք է ու միայն զինքը պաշտել:

Յիսուս յաղթեց բոլոր փորձութիւններուն:

ԺԲ. ԴԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Յիսուս վերագարձաւ այն երկիրը, ուր կը մկրտէր Յովհաննէս: Երբ Յովհաննէս Մկրտիչ տեսաւ զայն, ըսաւ իր աշակերտներուն.

— Ահաւասիկ Աստուծոյ դառնուկը: Ասոր համար էր որ ըսած էի. «Մէկը պիտի գայ ինձմէ ետքը, որ ինձմէ առաջ է»։ Կը վկայեմ որ Ան Աստուծոյ Որդի է:

Յովհաննէսի աշակերտներէն ոմանք լսեցին ասոր այս խօսքերը և ուզեցին հետեւիլ Յիսուսի: Յաջորդօրը երբ Յիսուս կ'անցնէր Յարդանանի քովէն, իրեն հետէն գացին Յովհաննէսի երկու աշակերտները. անոնց անուններն էին Անդրեաս և Յովհաննէս:

Յիսուս ետին դարձաւ և տեսաւ զանոնք, ու հարցուց թէ ի՞նչ կ'ուզեն: Անոնք պատասխանեցին.

— Տէ՛ր, ո՞ւր կը ընակիս:

Այն ատեն Յիսուս հրաւիրեց զանոնք, որ մինչև իրիկուն անոր մօտ մնացին: Ուրախ էին որ ճշմարիտ վարդապետին աշակերտ եղած էին:

Անդրէաս եղբայր մը ունէր, որուն անունն

էր Սիմեոն: Անդրէաս եղբօրը յայտնեց թէ գտած են Մեսիան և առաջնորդեց զայն Յիսուսին քով: Յիսուս Սիմէոնին անուանը փոխեց և դրաւ Պետրոս, որ քառ կը նշանակէ:

Յաջորդ օրը, Յիսուս տեսաւ ուրիշ մէկը, որուն անունն էր Փիլիպպոս: Ըսաւ անոր.

— Ետեւէս եկո՛ւր:

Փիլիպպոս եղբայր մը ունէր, Նաքանայել անուն. դնաց զայն փնտոելու և գտնելով թղենիի մը տակ, գոչեց ուրախութեամբ.

— Գտանք Մեսիան, Յովսէփի որդի Նազարէթցի Յիսուսն է եղեր:

Նաթանայէլ ըսաւ.

— Նազարէթէն աղէկ բան կրնա՞յ կ'ընել:

Փիլիպպոս չկրցաւ պատասխանել և հրաւիրեց զայն որ անձամբ գոյ տեսնէ: Յիսուս երբ նաթանայէլը տեսաւ, ըսաւ.

Ահա ճշմարիտ Իսրայելացի մը, որուն մէջ նենդութիւն չկայ:

— Զիս ո՞ւսկից կը ճանչնաս, հարցուց Նաթանայէլ:

— Ես քեզ տեսայ թղենիին տակ, Փիլիպպոսի քեզ կանչելէն առաջ:

— Տէ՛ր, դուն Աստուծոյ Որդին ես, Իսրայելի թագաւորն ես, գոչեց Նաթանայէլ:

ԺԳ. ԳԱՍ

Կ Ա Ն Ա Յ Ի Զ Ա Ր Ս Ա Ն Ի Ք Ը

Նաթանայէլի դէպքէն երեք օր ետք, Յիսուս դնաց Գալիլիա: Կանա քաղաքը հարսնիք մը կար: Այդ հարսնիքին հրաւիրուած էին Մարիամ, Յիսուս և իր աշակերտները:

Ճաշի ժամանակ գինին պակսեցաւ: Ուստի Մարիամ Յիսուսին խմացուց գինիին հատած ըլլալը: Յիսուս պատասխանեց.

— Տակաւին ժամս հասած չէ:

Մարիամ կը հաւատար Յիսուսի զօրութեանը. հրամայեց սպասաւորներուն որ Յիսուսի պատուէրները գործադրեն: Հոն կային վեց թակոյկներ. Յիսուս պատուիրեց ծառաներուն որ այդ թակոյկները ջրով լեցնեն: Երբ լեցուցին, Յիսուս ըսաւ.

— Առէ՛ք հիմա և սեղանապետին տարէք:

Երբ սեղանապետը համը նայեցաւ, զարմացաւ և փեսան կանչելով, ըսաւ անոր.

— Ամէն մարդ աղէկ գինին առաջ կը հրամայնէ, և երբ հրաւիրեալները շատ խմած ըլլան, կը հրամայնէ քիչ աղէկը. բայց դուն աղէկը պահեցիր մինչև հիմա:

Ամէնքը խմեցին և զարմացան: Աշակերտները աւելի ևս հաւատացին Յիսուսի:

ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԸ ԿԸ ՄԱՔՐԷ

Հրեաներուն Չատիկը կը մօտենար: Յիսուս երուսաղէմ դնաց Չատիկը հոն ասնելու համար:

Տաճարին մէջ տեսաւ ահագին բազմութիւն մը, որ ոչ թէ աղօթելու համար հաւաքուած էր, այլ դրամ շահելու: Տեսաւ շատեր, որ կը ծախէին եղներ, ոչխարներ, աղաւնիներ, տեսաւ լումայափոխներ (սարաֆ), որոնք սեղաններու առջև նստած էին: Յիսուս բարկացաւ. չուանէ խորազանով մը սկսաւ դուրս վռնակել ամէնքը:

Կործանեց սեղանները, դրամները ցրուեց: Աղաւնի ծախողներուն ալ ըստւ.

— Վերցուցէք ասկէ, և իմ Հօրս տունը շուկայ մի՛ դարձնէք:

Ոչ ոք համարձակեցաւ դիմադրելու Յիսուսի, և տաճարը մաքրուեցաւ այս առուտորով զբաղողներէն:

Չատիկ միջոցին Յիսուս միշտ կը քարոզէր ու կը սորվեցնէր ժողովուրդին: Շատերը հաւատացին Անոր:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՍԱՄԱՐԱՅԻ ԿԻՆԸ

Չատիկ ասնէն ետք, Յիսուս դարձաւ Նազարէթ: Ճամբան Սամարիայի մօտէն կ'անցնէր: Յիսուս և աշակերտները հասան Սամարիայի մօտ գիւղի մը քով: Այդ գիւղին անունն էր Սիււքեմ: Հոն, ճամբուն վրայ կար ջրհոր մը, որ Յակոբ Նահապետին փորել տուածն էր:

Աշակերտները գիւղ գացին ուտելիք գնելու համար, իսկ Յիսուս նստեցաւ ջրհորին քովիկ:

Սամարիայի և անոր շուրջ գտնուած գիւղերու բնակիչները առաջ Իսրայէլացի էին, բայց յետոյ մէկ մասը գերի տարուեցան ու անոնց տեղ օտար երկիրներէ կուտալաշա ժողովուրդներ հաստատուեցան: Սամարիայի Իսրայէլացիները խառնուեցան անոնց հետ և սկսան ուրիշ աստուածներ ալ պաշտել: Հրեաները այդ պատճառով չէին սիրեր Սամարացիները և անոնց հետ յարաբերութիւն չէին ըներ, անոնց եփած կերակուրները չէին ուտեր, անոնց ձեռքէն ջուր չէին խմեր: Միայն չոր պըտուղներ կ'առնէին և լուալէ ետք կ'ուտէին:

Յիսուս երբ նստած էր ջրհորին քով, գիւղէն

կին մը եկաւ, կուտը ձեռքը, ջուր քաշելու համար: Երբ ջուր հանեց, Յիսուս խմելու համար ջուր ուզեց անկէ: Այն ասեւն կինը ըսաւ.



Սամարացի կինը եւ Յիսուս

— Դուն որ Հրեայ ես, ի՞նչպէս ինձմէ ջուր կ'ուզես:

Յիսուս պատասխանեց.

— Եթէ գիտնայիր թէ ո՞վ է քեզմէ ջուր ուզողը, թերեւս դուն ուզէիր անկէ և քեզի կենդանի ջուր կուտար:

— Այս ջրհորը խորունկ է, դուն դոյլ ալ չունիս, որ ջուր քաշես. քու ջուրդ ո՞ւրկէց է. միթէ

դուն Յակօբ Նահապետէ՞ն ալ աւելի մեծ մարդ մըն ես. անիկա փորել տուած է այս ջրհորը:

— Այս ջրհորին ջուրը խմողը դարձեալ կը ծառանայ, ըսաւ Յիսուս, բայց իմ տալիք ջուրը ո՞վ որ խմէ, այլեւս չի ծառանար:

— Տէ՛ր, ըսաւ կինը, ինձի ալ տուր ուրեմն այդ ջուրէն, որ ամէն անգամ հոս չգամ ջուր քաշելու համար:

— Լա՛ւ, յարեց Յիսուս, գնա էրիկդ կանչէ:

— Ես էրիկ չունիմ, պատասխանեց կինը:

— Աղէկ ըսիր թէ էրիկ չունիմ, ըսաւ Յիսուս, դուն հինգ էրիկ փոխած ես, հիմակուան ունեցածդ ալ քուկդ չի համարուիր:

Կինը դարմացաւ, չփոթեցաւ և ըսաւ.

— Տէ՛ր, դուն մարդարէ ես: Դուք Հրեաներդ կ'ըսէք թէ բուն երկրպագութեան տեղը Երուսաղէմն է, մենք ալ կ'ըսենք թէ հոս, այս լեռան վրայ. ո՞րն է ճիշտը:

— Կի՛ն, պատասխանեց Յիսուս, ժամանակը եկած է, երբ ոչ Երուսաղէմի մէջ և ոչ այս լեռան վրայ պիտի երկրպագեն Աստուծոյ. ճշմարիտ երկրպագուները իրենց սիրտերուն մէջ և հոգիով ու ճշմարտութեամբ պիտի երկրպագեն:

— Այո՛, ըսաւ կինը, երբ որ Մեսիան գայ այդ բաները պիտի սորվեցնէ:

ԺԷ. ԴԱՍ

ԿԱՓԱՌՆԱՌԻՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Յիսուս նազարէթէն մեկնեցաւ և դնաց Կափառնաոււմ, որ Գեցցեսաւրեք ծովակին եզերքն էր: Շաբաթ օրերը կը քարոզէր Սինակոկային մէջ և դուրսը: Ամէն ոք կը զարմանար անոր խօսքերուն և իմաստութեան վրայ:

Օր մը, երբ Յիսուս կ'անցնէր, հանդիպեցաւ դիւանար մարդու մը, որ բարձր ձայնով սկսաւ գոչել.

— Ձգէ՛ մեզ, ի՞նչ ունիս դուն մեզի հետ, Յիսուս նազարէթցի. մեզ կորսնցնելով՝ համար եկած ես աշխարհ:

Յիսուս յանդիմանեց դեւը, որ հիւանդին բերնով կը խօսէր, և ըսաւ անոր.

— Լռէ՛, և ե՛լ այդ մարդուն մէջէն:

Դիւանարը կատղեցաւ, ինկաւ դեռին, փրփրեցաւ, յետոյ հանդարտեցաւ: Բժշկուած էր. դեւը անոր մէջէն դուրս ելած էր: Ամէնքը զարմացան և կ'ըսէին.

— Աս ի՞նչ է. զօրութեամբ և իշխանութեամբ կը հրամայէ չար ոգիներուն և անոնք կը հնազանդին:

Շաբաթ օր մը Սինակոկայէն ելնելով, Յիսուս մտաւ Սիմոն Պետրոսի տունը: Պետրոսի զոքանչը սաստիկ ջերմով հիւանդ պառկած էր: Յիսուս մօտեցաւ, բռնեց ձեռքէն և հանեց: Իսկոյն բժշկուեցաւ և սկսաւ սպասարկել Յիսուսի և անոր աշակերաններուն:

Այդ օրը, իրիկուան դէմ, Պետրոսի տան դըրան առջև բերին բազմաթիւ հիւանդներ, դիւանահարներ: Կափառնաումի բոլոր բնակիչները հոն հաւաքուած էին: Յիսուս ելաւ տունէն և բժշկեց հիւանդները:

Ապա մեկնեցաւ: Անկէ ետքը Յիսուս կը սլաքատէր Գալիլիայի բոլոր քաղաքները և կը քարոզէր:

ԺԸ. ԴԱՍ

ՀՐԱՇԱԼԻ ԶԿՆՈՐՄՈՒԹԻՒՆԸ

Անդամ մը, Յիսուս հասաւ Գեննեսաւրեթի ծովակին քով և կը քարոզէր: Ժողովուրդը երթալով կը բազմանար և կը խոնուէր: Յիսուս տեսնելով որ

չառ դժուարութիւն կը քաշէր իր խօսքերը լսեցնելու համար, և տեսնելով ծովին եղերքը երկու նաւակներ, մտաւ անոնցմէ մէկին մէջ և սկսաւ նաւին մէջէն քարոզել:

Այդ նաւը կը պատկանէր Պետրոսի: Յիսուս երբ դադարեցաւ քարոզելէ, ըսաւ Պետրոսին և անոր եղբայր Անդրէասին.

— Նաւը աւելի բաց ծովը քշեցէք և ուռկանը ծովը ձգեցէք:

— Տէ՛ր, պատասխանեց Պետրոս, մենք բոլոր գիշերը աշխատած ենք, և բան մը բռնած չենք, բայց քու խօսքդ կը կատարենք:

Երբ կատարեցին, ուռկանը լեցուեցաւ բազմաթիւ ձուկերով, քիչ կը մնար որ պատռէր: Այն ատեն նշան ըրին միւս նաւին, որ դան իրենց օգնեն: Նաւատորները եկան. երկու նաւերը լեցուեցան մինչև իրենց բերանը:

Պետրոս Յիսուսի ոտքն ինկաւ և ըսաւ.

— Տէ՛ր, հեռացի՛ր ինձմէ, որովհետեւ ես մեղաւոր մարդ եմ:

Բայց Յիսուս անոր պատասխանեց.

— Մի՛ վախնար, ասկէ ետքը մարդու որսորդ պիտի ըլլաս:

ՃԹ. ԳԱՍ

ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Օր մը, Յիսուս, կափառնառւմ՝ տան մը մէջ նստած էր: Գալիլիայէն, ամէն կողմերէն եկած Փարիսեցիներ և օրէնքի վարդապետներ շրջապատած էին զինքը:

Այդ ատեն, չորս մարդ՝ ըերին անդամալոյծ մը, որպէսզի Յիսուս բժշկէ զայն: Բայց չէին կրնար տունէն ներս մտցնել, որովհետեւ բազմաթիւնը խոնուած էր դրան առջև:

Երուսաղէմի և Գալիլիայի մէջ տուները քարաշէն են, և տանիքներն ալ տափարակ: Երբեմն տուները չինուած կ'ըլլային զառիվայրի մը վրայ. ետեւի կողմէն կարելի էր տանիքը ելնել: Յիսուսի նստած տունը այդ տեսակ էր:

Անդամալոյծը բերողները տան ետեւի կողմէն ելան տանիքը և բացուածքէ մը չուաններով վար կախեցին հիւանդը ու իջեցուցին Յիսուսի առջև: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, ըսաւ անդամալոյծին.

— Տղա՛ս, մեղքերդ ներուած ըլլան:

Այն ատեն Փարիսեցիները և դպիրները իրենք իրենց մէջ սկսան չարախօսել Յիսուսին վրայ:

— Ասիկա հայհոյութիւն է, կ'ըսէին, ո՞վ կըրնայ մեղքերուն թողութիւն տալ Աստուծոյ զատ:

Բայց Յիսուս հասկցաւ անոնց խորհուրդը և ըսաւ անոնց.

— Ինչո՞ւ անիրաւ խորհուրդներ կ'ունենաք. ո՞րը դիւրին է ըսել. «Մեղքերդ ներուած ըլլան» ըսելը թէ «Ելի՛ր և քալէ՛» ըսելը: Արդ, որպէսզի գիտնաք թէ Մարգու Որդին իշխանութիւն ունի մեղքերը ներելու, ա՛հա կ'ըսեմ.

— Ելի՛ր, անդամալոյծ, ա՛ն մահիճդ և սուսդ գնա՛:

Անմիջապէս հիւանդը ելաւ, ժողովեց իր մահիճը և սուն գնաց, Աստուած օրհնելով: Ամէն մարդ կը վարմանար և ամէնքը Աստուած կը փառաբանէին:

Ի. ԳԱՍ

ՀԱՐԻՐԱՊԵՏԻՆ ԾԱՌԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏԻՆ

Ա Ղ Զ Ի Կ Ը

Անգամ մը, դարձեալ Կափառնառում կը գտնուէր Յիսուս. Հոսովմայեցի հարիւրապետ մը մօտեցաւ անոր և խնդրեց որ իր ծառան բժշկէ:

— Պիտի դամ և բժշկեմ, ըսաւ Յիսուս:

— Տէ՛ր, յարեց հարիւրապետը, ևս արժանի չեմ որ դուն իմ տունս մտնես, այլ ըսէ՛ խօսք մը և ծառան պիտի բժշկուի:

Յիսուս այս խօսքերը լսելով հիացաւ և ըսաւ իրեն հետեւողներուն.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայելացիներուն մէջ անգամ այսքան մեծ հաւատք չգտայ: Կ'ըսեմ ձեզի թէ Արեւելքէն ու Արեւմուտքէն պիտի գան, արժանի պիտի ըլլան Աբրահամի, Իսահակի և Յակոբի հետ հասելու երկիրնքի արքայութեան մէջ, մինչդեռ Իսրայելացիները արժանի պիտի չըլլան անոր:

Ապա դարձաւ հարիւրապետին և ըսաւ.

— Գնա՛ և հաւատարիչ պէս թող ըլլայ:

Ծառան այդ վայրկեանէն բժշկուած էր:

Ուրիշ անգամ մը. Յայրոս անուն ժողովրդապետ մը եկաւ Յիսուսի ոտքն ինկաւ և ըսաւ.

— Տէ՛ր, աղջիկս մեռնելու վրայ է, եկա՛ւր

ձեռքդ վրան դիր, որ առողջանայ:

Յիսուս սկսաւ երթալ: Երբ տակաւին ձամբան կը գտնուէին, Յայրոսի լուր բերին թէ աղջիկը մեռած է, պարապ տեղը վարդապետը չյողներցնէ: Յիսուս քաջալերեց ժողովրդապետը՝ ըսելով.

— Մի՛ վախնար, միայն հաւատա՛, ան պիտի առողջանայ:

Երբ տուն հասան, Յիսուս հեան առաւ միայն Պետրոսը, Յակոբոսը, Յովհաննէսը և աղջկան ծնողքը: Մեռելին խուցը մտաւ ան, բռնեց աղջկան ձեռքէն և գոչեց:

— Աղջիկ, քեզի կ'ըսեմ, ելի՛ր:

Աղջիկը սաքի ելաւ: Յիսուս հրամայեց որ կե-
րակուր տան սևակու: Ծնողքը զարմացան այս
բանին վրայ, բայց Քրիստոս սպասուիրեց մէկուէն
չըսել:

ԻԱ. ԴԱՍ

Ն Ա Յ Ի Ն Ի Պ Ա Տ Ա Ն Ի Ն

Յիսուս դնաց քաղաք մը, որուն անունն էր
Նայիվ: Երբ քաղաքին դրան մօտ հասան, տեսաւ որ
մեռել մը կը տանէին թաղելու: Անիկա այրի կնոջ
մը մէկ հատիկ որդին էր:

Դագաղին ետեւէն կ'երթային մեռելին մայրը,
բաղմաթիւ քաղաքացիներ: Յիսուս դիմաց, մօտե-
ցաւ դագաղին ու ըսաւ.

— Պատանի՛, ե՛լ կ'ըսեմ քեզի:

Մեռելը ելաւ և սկսաւ խօսիլ: Բոլոր ներկա-
ները վախցան ու զարմացան: Կ'ըսէին.

— Մեծ մարդարէ մը յայտնուեցաւ մեր մէջ և
Աստուած այցելած է իր ժողովուրդին:

ԻԲ. ԴԱՍ

Բ Ե Թ Ղ Ե Զ Դ Ա Յ Ի Բ Ժ Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Զատիի տօնին առիթով, Յիսուս դարձեալ գը-
նաց Երուսաղէմ: Արդ, Երուսաղէմի մէջ կար ա-
ւաղան մը, որ կը կոչուէր Բեթհեզդա: Անոր շուրջ
5 կամ արկապ սրահներ կային: Այդ սրահներուն
մէջ դրուած էին բաղմաթիւ հիւանդներ, կոյրեր,
կաղեր, անդամալուծներ:

Այս բոլոր հիւանդները կը սպասէին որ աւա-
ղանին ջուրը յուզուի: Տարին անգամ մը Տիրոջը
հրեշտակը կ'իջնէր և աւաղանին ջուրը կը խառնէր.
այդ ատեն ո՛վ որ կարենար ամէնէն առաջ ջուրը
նետուիլ, կը բժշկուէր:

Հոն մարդ մը կար, որ 38 տարիէ ի վեր հի-
ւանդ էր: Յիսուս ըսաւ անոր. «Կ'ուզե՞ս բժշկուիլ»: Հիւանդը պատասխանեց.

— Տէ՛ր, մէկը չունիմ որ երբ ջուրերը յուզ-
ուին, զիս աւաղանը ձգէ. և մինչդեռ ես կը շար-
ժիմ, ուրիշը ինձմէ առաջ ջուրը կը նետուի:

— Ելի՛ր, հրամայեց Յիսուս, ա՛ն մահիճդ և դնա՛:
Մարդը անմիջապէս ելաւ, ժողովեց անկողինը
և կը քալէր: Յիսուս ըսաւ անոր.

— Ահա բժշկուհեցար, այլևս չմեղանչես, որ աւելի գէշ բան մը չպատահի քեզի:

Այդ օրը Շաբաթ էր: Հրեաները սկսան արարնջալ, որովհետև կը կարծէին թէ Շաբաթ օրը պէտք էր չէր այդպիսի դործեր ընել. Շաբաթ օրը պէտք էր սուրբ պահել: Յիսուս անոնց պատասխանեց.

— Հայրս մինչև հիմա անդադար կը գործէ, ես ալ այնպէս կ'ընեմ:

Հրեաները երբ տեսան որ Քրիստոս ինքզինքը Աստուծոյ հաւատար կը ներկայացնէ, բարկացան և կ'ուզէին սպաննել զայն: Բայց Յիսուս անոնց հարկ եղած պատասխանները տալով, քաշուեցաւ:



ԻԳ. ԳԱՍ

Ծ Ո Վ Ը Կ Ը Խ Ա Ղ Ա Ղ Ի

Յիսուս դարձաւ Գալիլիա և դարձեալ սկսաւ քարոզել Գեներեսարեթի ծովափին եղերքները:

Անգամ մը Յիսուս նաւակ մը նստաւ ծովափին միւս եղերքը անցնելու համար: Երբ ծովին բացերը ելան, Յիսուս ընկողմանեցաւ նաւին ետեւը և սկսաւ քննաւալ: Յանկարծ սոսկալի հով մը ելաւ և սկսաւ ծովը ալեկոծել: Նաւակը ջուրով լեցուեցաւ:

Աշակերտները Յիսուսի մօտենալով արթնցուցին զայն, ըսելով.

— Վարդապե՛տ, ահա կը կորսուինք:

— Ինչո՞ւ կը վախնաք, թերահաւատներ՛ք, պատասխանեց Յիսուս:

Ապա ելաւ հրաման ըրաւ հողմերուն և ալիքներուն ու մեծ խաղաղութիւն մը աիբեց:

Աշակերտները սարսափած ու զարմացած իրարու կ'ըսէին.

— Ո՞վ կը կարծէք ըլլայ այս մարդը, որուն կը հնազանդին հողմերն ու ծովը:

Յուզուած ծովը աւխարհն է, նաև՝ Եկեղեցին: Եկեղեցին պիտի դիմադրէ բոլոր փոքորիկներուն, որովհետեւ Յիսուս Քրիստոս անոր մեջն է:



ԻԳ. ԳԱՍ

ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ՄԻՒՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Յիսուս երբ իր քարոզները կուտար, մեծ բազմութիւն մը միշտ կը հետեւէր իրեն: Այդ բազմութեան մէջ կային որ կը հաւատային Յիսուսի խօսքերուն և կարողութիւններուն և կ'ուզէին հետեւիլ անոր:

Յիսուս իր այդ հետեւողներէն մէկ քանին ուզեց իրեն աշակերտ դարձնել: Անոնք որ առաքելութեան ընդունակ սիրտ մը ունէին, կը հրաւիրէր որ հետեւին իրեն: Իրեն հետ կը պտտցնէր զանոնք, որպէսզի իր քարոզները լսեն միշտ, իր վարդապետութիւնները սորվին, ուրիշներուն կարենալ սորվեցնելու համար:

Իր բազմաթիւ աշակերտներուն մէջէն Յիսուս զատեց ասաներկու հոգի, որոնք եղան 12 առաքեալները:

Այդ 12 առաքեալներէն մէկն էր Մասքեոս, որ մաքսաւոր մըն էր: Մաքսաւորները Հրեաներուն ատելի էին և մեղաւոր մարդ կը համարուէին: Մատթէոս հարուստ մէկն էր, բայց ազնիւ սիրտ մը ունէր, Յիսուս ատենելով զայն, ըսաւ անոր.

— Ետեւէս եկուր:

Մատթէոս շատ ուրախացաւ որ Յիսուս իրեն աշակերտ ըլլալու պատիւ կ'ընէ: Մեծ խնջոյք մը պատրաստեց Յիսուսին և անոր աշակերտներուն համար. հրաւիրեց նաև իր մաքսաւոր բարեկամները:

Փարիսեցիները, ատենելով որ Յիսուս մաքսաւորներուն հետ ճաշի նստած է, սկսան բամբասել և ըսել աշակերտներուն.

— Ինչո՞ւ ձեր վարդապետը մեղաւորներուն հետ հաց կ'ուտէ:

Յիսուս իմանալով պատասխանեց.

— Ասողջ մարդիկ բժիշկի պէտք չունին, այլ հիւանդներ: Ես եկայ ո՛չ թէ արդարները, այլ մեղաւորները հրաւիրելու որ ապաշխարեն:

Այսպէս Յիսուս այլևայլ աստիճաններէ մարդեր ընտրեց իրեն աշակերտները: Զանոնք վերջնականապէս սրտելէ առաջ, Յիսուս անգամ մը առանձնացաւ. ամբողջ գիշեր մը աղօթեց: Յաջորդ առաւունջ կանչեց բոլոր աշակերտները և անոնցմէ զատեց 12 հոգին:

Այդ տասներկու հոգիներն էին.

1. Պետրոս, 2. Անդրեաս Պետրոսի եղբայրը, 3. Յակոբոս, 4. Յովհաննէս, 5. Փիլիպպոս, 6. Բարթոլիմէոս, 7. Թովմաս, 8. Մասքեոս, 9. Յակոբոս՝ Ալփէսի որդին, 10. Թադէոս, 11. Սիմոն Նախանձայոյց, 12. Յուդա Իսկարիովտացի:

Ասոնցմէ զատ Յիսուս ընտրեց նաև 72 աշակերտներ, և անոնց բոլորին ալ կ'ուսուցանէր իր վարդապետութիւնները: Շատերը կը զրկէր գիւղերը քարոզելու համար:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ի Մ

ՔՐԻՍՏՈՍԻ ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌՎՔԵԱԼՆԵՐԸ

ԱՌՎՔԵԱԼ կը նշանակէ զրկուած մեկու մը կողմէ՝ իբրև պատգամաւոր: Այս անունը կը տուի անոնց, որ Քրիստոս զրկեց Աւետարանը քարոզելու:

Առաքեալները թիւով 12 հոգի էին, Իսայիլի 12 ցեղերու թիւին համեմատ, որոնց անունները վերը յիշատակուած են:

1. ՍԻՄՈՆ ՊԵՏՐՈՍ. — Պետրոս բառը յունարէն կը նշանակէ *քար*, *վէճ*: Պետրոս իր բուն անունով կը կոչուէր Սիմոն կամ Շնաւան: Բերսայիդացի էր եւ որդի ձկնորս Յովնանի, ինքն ալ ձկնորս էր: Ամուսնացած էր եւ կը բնակէր Կափառնառում: Առաջին անգամ իր եղբօրը՝ Անդրէասի միջոցաւ եկաւ Յիսուսի մօտ եւ եղաւ անոր առակերս: Քրիստոս անոր Սիմոն անունը փոխեց ու Պետրոս դրաւ, անոր համարձակութեան համար: Յիսուսի բազմաթիւ գործերուն ներկայ եղած է ան՝ իբրեւ մօտիկ առակերս: Նշանաւոր է անոր համարձակ խօսքը Այլակերպութեան լեռան վրայ, նոյնպէս անոր խօսքերը՝ Քրիստոսի մասնութեան գիշերը, երբ յայտնեց թէ ո՛րքան կը սիրէ ու կը յարգէ իր ուսուցիչը. Յիսուս պատասխանեց անոր թէ երեք անգամ պիտի ուրանայ զինքը: Նշանաւոր դէպքեր են անոր Մաղոսի ականջը կտրելը, երեք անգամ Յիսուսն ուրանալը եւ Քրիստոսին ներելը: Պենտէկոստէի օրը Պետրոս էր որ քարոզեց Քրիստոսի աւետարանը, բժշկեց կաղը՝ սանաթին դրան առջեւ: Նշանաւոր է իր մէկ տեսիլը Յովպէի մէջ եւ Կուռնելիոս հարիւրապետին հաւատալը: Պետրոս ամէն տեղ քարոզեց քրիստոնէութիւն, մասնաւորաբար Կորնթոսի, Անտիոքի, Բաբելոնի, Աղեփանդրիոյ եւ Հռոմի մէջ. խաչուեցաւ ու նահատակուեցաւ շուրջ 67 բուականին:

2. ԱՆԴՐԷՍՍ. — Սիմոն Պետրոսի եղբայրն էր եւ Բերսայիդացի: Յովնաննէս Մկրտիչի առակերսներէն ըլլալով, հասկցաւ թէ սպասուած Մեսիան Յիսուսն է, ուստի առաքեալներուն մէջ առաջինը եղաւ որ Քրիստոսի տեսէն գնաց: Չենք գիտեր թէ ո՛ր կողմերը քարոզեց ան. բայց կը կարծուի թէ գացած է Յունաստան, Թրակիա, Սկիւթիա (Ռուսաստան): Յետոյ անցնելով Յունաստանի Փաթրոս քաղաքը, սպաննուեցաւ խստորակ խաչի (X) վրայ: Այդ ձեւ խաչը ընդհանրապէս կը կոչուի Ս. Անդրէասի խաչ:

3. ՅԱԿՈԲՈՍ ՉԵՔԵԹԵԱՆ. — Ան կոչուած է Յարոս Մեծ կամ երէց. որպէսզի չսփոթուի 12 առաքեալներէն Կրօսեր Յակոբոսին հետ: Ան եղբայրն էր Յովնաննէս Աւետարանիչի եւ որդի Չեքեթոսի ու Սողոմէի: Յակոբոս Բերսայիդայէն էր եւ հայրենակից Պետրոսի եւ Անդրեասի: Յակոբոս էր Յովնաննէս ձկնորս էին՝ իրենց հօրը Չեքեթոսին հետ: Այս երկու եղբայրները կոչուեցան Որդիք Որսաման: Քրիստոսի Համբարձումէն ետք Յակոբոս մնաց Երուսաղէմ, ուր սպաննուեցաւ 44 բուականին: Անոր զլուխը կը գտնուի Երուսաղէմ, Հայոց Ս. Յակոբեանց վանքը, այդ պատճառով անոր ուխտավայրը կը կոչուի նաեւ Գլխադիր Ս. Յակոբ:

4. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻՆՏԱՐԱՆԻՉ. — Ինչպէս ըսինք, Յակոբոսի եղբայրն էր, Բերսայիդացի, ձկնորս, բայց

բաւական հարուս էին: Յովհաննէս 12 առաքեալներուն մէջ ամենէն փոքրն էր տարիքով: Գեղեցիկ էր դեմքով ու սրտով, հանդարտ, խոնարհ, գրասիրտ ու եղբայրասէր: Յիսուս զայն շատ կը սիրէր. խաչին վրայէն իր մօրը ըսաւ. «Ահա ինչ որ դու», իսկ Յովհաննէսին ըսաւ. «Ահա ինչ մայրդ»: Ան աւետարանը քարոզեց Եփեսոսի մէջ, Փոքր Ասիա, զնաց մինչեւ Հայաստան: 95 բուականին, ծերունի վիճակի մէջ, արտուայեցաւ Պատմաս կըղզին, ուր փառաւոր տեսիլք մը տեսաւ եւ գրեց *Յայտնութիւն* գիրքը: Յետոյ դարձաւ Եփեսոս, ուր ապրեցաւ մինչեւ խոր ծերութիւն, այնպէս որ դժուարաւ եկեղեցի կ'երթար: Այլեւս չիրնալով երկար քարոզներ տալ, կ'ըսէր. «Մանուկներ, սիրեցե՛ք զիրար»: Կը պատմուի թէ Յովհաննէս երբ Եփեսոս դարձաւ, լսեց որ իր նախկին առաքելներէն մէկը լեռները ելած եւ աւազակ դարձած էր: Ծերունի առաքեալը զնաց աւազակներուն որջը եւ զտաւ առաքելները, որ համոզուեցաւ եւ դարձաւ քաղաք: Յովհաննէս մեռաւ 100 բուականին: Կ'ըսուի թէ իր մեռնելու ատեն ինք փորել տուաւ իր գերեզմանը եւ մէջը պառկելով, հոգին աւանդեց:

5. *Փիլիպոս*. — Ան ալ Բեքսայիդացի էր, եւ նախապէս Յովհաննէս Մկրտիչի առաքելներէն էր: Աւանդութեամբ կ'ըսուի թէ ան քարոզեց Փոլիզիա (Անատոլի), եւ մեռաւ Ասորիքի (Սիրիա) մէջ:

6. *Բարթոլոմէոս ԿԱՄ ՆԱԹԱՆԱՅԷԼ*. — Անոր

հօրը անունն էր *Թողիմէ*, այդ պատճառաւ կոչուած է *Բար-Թողիմէոս*. Բար որդի ըսել է: Փիլիպոսի եղբայրն էր: Փիլիպոս երբ Յիսուսի առաքելներ դարձաւ, զնաց զտաւ իր *Նաթանայէլ* եղբայրը եւ տարաւ Մեսիային մօտ: Բարթոլիմէոս Քրիստոսի Համբարձումէն ետք, քարոզեց Արաբներուն, Պարսիկներուն, Հնդկներուն եւ Հայերուն: Սպաննուելով, քաղուեցաւ Հայաստան, Վանայ մօտ՝ Պաշալի քաղաքին քովերը: Նշանաւոր է անոր գերեզմանին վրայ շինուած վանքը, որ կը կոչուի *Ս. Բարթոլիմէոսի վանք*:

7. *ՄԱՏԹԷՈՍ ԿԱՄ ԴԵԻԻ*. — *Մատթէոս* կը նշանակէ *Պարզէ*: Քրիստոսի 12 առաքեալներէն էւ 4 աւետարանիչներէն մէկը եղաւ ան: Ծնունդով Գալիլիացի էր, արհեստով մասաւոր: Ուրիշ անունով կը կոչուի *Դեւի*: Անոր բնակավայրն էր Կափառնաում, եւ մասաւորութեան տեղն էր Տիբերիոյ ծովին մօտ: Հո'ն, իր պատշտին վրայ տեսաւ Յիսուս եւ հրաւիրեց երթալ իր ետեւէն: Մասքեոս ուրախութեամբ հետեւեցաւ Վարդապետին, եւ իր ուրախութիւնը յայտնելու համար խնջոյք մը սարքեց իր տան մէջ: Մասքեոս իր աւետարանը գրեց Քրիստոսի Համբարձումէն 3 տարի ետքը, այսինքն 41 բուականին, Երուսաղէմի մէջ, երբայցեքէն լեզուով:

8. *ՍԻՄՈՆ ԿԱՆԱՆԱՅԻ*. — Յիսուսի 12 առաքեալներէն մէկն էր նաեւ *Սիմոն*, որ իր ջերմեռանդութեան համար կոչուած է *Նաթանաճայոյց*: Ան քարոզած է նաեւ Հայաստանի մէջ:

9. **ԹՈՎՄԱՍ**. — Գալիլիացի էր Թովմաս, Յիսուսի անձնուրաց առակերներէն մէկը: Բայց դիւրահաւան չէր. այն պահանառով չուզեց հաւատալ Յիսուսի յարուրեան, առանց ապացոյց մը ունենալու: Ան քարոզեց Հայասանի մէջ, Քուսաններուն՝ Կասպից ծովուն երկրները եւ Հնդկասան:

10. **ԹԱԴԷՈՍ**. — Ուրիշ անունով կը կոչուէր *Յուդաս*: Եղբայր մը ուներ Յակոբոս անունով, որ կը կոչուէր *Պղտիկ* կամ *Կրտսեր*, զանազանելու համար Յակոբոս Զեբեթեանէն: Միւս եղբայրն էր Յովսէ: Ասոնց մայրը Մարիամ շահ կանուխէն հաւատաց Յիսուսի եւ իր տղոց հետ մեկտեղ հետեւեցաւ անոր: Յիսուսի հետ միասին կը համբորդէ շահ տեղ, անոր ծառայելու համար: Յիսուսի հետէն զնաց նաեւ Գողգոթա, եւ Քրիստոսի մօտը հետ խաչին ոտքը կեցած էր. զտնուցաւ նաեւ քաղման ժամանակ, պատահածն անուշահոտ իւղեր եւ խունկեր՝ Տերը օծելու համար: Յուդա-Թադէոս եղաւ Յիսուսի նախանձախնդի: քարոզիչներէն մէկը: Քարոզեց Կապադովկիոյ Կեսարիա (Գայսերի) քաղաքին մէջ, անկէ անցաւ Հայասան, քարոզեց Հայերուն: Եղաւ Հայոց լուսաւորիչներէն մէկը: Նահատակուեցաւ Արշակ գաւառին մէջ:

11. **ՅԱԿՈԲՈՍ ԱԼՓԵԱՆ «ԿՐՏՍԵՐ»**. — Վերը յիշուած Յուդա-Թադէոսի եղբայրն էր, որուն հայրն էր Ալփէոս: Իր եղբորը հետ ան ալ հետեւեցաւ Յիսուսի:

12. **ՅՈՒԴԱ ԻՍԿԱՐԻՈՎՏԱՅԻ**. — Յիսուսի 12 առաքեալներէն մէկը: Իսկարիովս քաղաքէն էր: Առաքեալներուն զանձապահն էր եւ ինքը կը գներ իրենց ապրուստին համար պէտք եղածները: Բայց Յուդա արծաթաքէր էր եւ իրեն յանձնուած սակէն սովոր եւ գողնալ, այդ պահանառով ալ մասնեց իր Ուսուցիչը: Իբր երեք ոսկիի փոխարէն, խոստացաւ Հրեաներուն ցուցնել այն տեղը, ուր կարելի էր բռնել Յիսուսը՝ գիշեր ժամանակ՝ առանց խռովութիւն հանելու: Եւ կատարեց իր խոստումը. սակայն երբ տեսաւ իր մասնութեան հետեւանքը, խղճի խայր զգաց, դրամը նետեց քահանաներուն առջեւ ու գնաց կախեց ինկզինքը: Կ'երեւի քէ չուանը փրկելով, գլխիվար ինկաւ ու ջախջախուեցաւ: Անոր վախճանը մեծ խրատ է ազանութեան դէմ, կեղծաւորութեան, անհաւատարմութեան եւ ապերախութեան դէմ:

13. **ՄԱՏԱԹԻՍ**. — «Մատարիա», կը նշանակէ *Տիրուհի պարզեւր*: Յիսուսի 72 առակերներէն մէկն էր. Քրիստոսի Համբարձումէն ետք, 11 առաքեալները տեսնելով որ իրենց բիւլէն մէկ հոգի պակսեցաւ՝ Յուդայի անձնասպանութիւնովը, որոնցցին անոր տեղ ուրիշ մէկը ընտրել: Ուստի վերնասունին մէջ ժողովուրդեացան, աղօթեցին եւ վիճակ ձգեցին մէկ երկու հոգիի վրայ. վիճակը եղաւ *Մատթիային*, որով ան նկատուեցաւ 12 առաքեալներէն մէկը:

ԻՆ. ԴԱՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻԶԻ ՄԱՀԸ

Այդ ժամանակ Գալիլիայի վրայ թագաւոր էր Հերովդէս, որ Մեծն Հերովդէսի, այսինքն Բեթզէնէմի մանուկները սպաննող Հերովդէսի որդին էր:

Փոքր Հերովդէս եղբայր մ'ունէր, որուն անունն էր Փիլիպպոս: Փիլիպպոս ամուսնացած էր միւս մէկ եղբօր աղջկան՝ Հերովդիայի հետ: Փոքր Հերովդէս Հերովդիային բաժնուիլ տուաւ Փիլիպպոսէն ու իրեն կին տաւ:

Յովհաննէս Մկրտիչ այս անպարկեշտ վարմունքը լսելով ծանր կերպով յանդիմանեց թէ Հերովդիան և թէ Հերովդէսը: Ուտի անոնք բարկացան և սեղեցին սպաննել զայն, բայց ժողովուրդէն վախցաւ Հերովդէս. միայն Յովհաննէսը բռնեց և բանա ձգեց:

Յովհաննէս Մկրտիչ իր բանտին մէջէն ալ միշտ կը յանդիմանէր, բայց Հերովդէս կը վախնար վնասելէ անոր:

Անգամ մը, երբ Հերովդէսի մէկ տարեդարձն էր, մեծ խնջոյք մը արուեցաւ: Խնջոյքի միջոցին, Հերովդիա իր աղջիկը առաջուց խրատեց և զրկեց հրաւիրեալներուն մէջ՝ պարելու համար:

Բոլոր հրաւիրեալները գինովցած էին: Հերովդէսն ալ գինովցած էր: Հերովդիայի աղջիկը՝ Հերովդիադա այնքան գեղեցիկ կաքաւեց, որ թագաւորը գոչեց երկու երեք անգամ:

— Ուղէ՛, ինչ որ ուզես պիտի տամ, թագաւորութեանս կէսն ալ ուզես՝ պիտի շնորհեմ:

Այն ատեն Հերովդիադա իր մօրմէն խրատուած,

— Կը խնդրեմ սր, ըսաւ, Յովհաննէս Մկրտիչի գլուխը բերուի ինձի սասկուտեղին մէջ դրուած:

Հերովդէս արամեցաւ, բայց հրաման ըրաւ որ Յովհաննէսը գլխատեն և գլուխը բերեն: Դանիճը դնաց և գլխատեց: Անոր աշակերտները եկան և վերցուցին անոր մարմինը:

ԻԶ. ԴԱՍ

ՅԻՍՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ԿԵՐԱԿՐԷ

Անգամ մը, Յիսուս Գալիլիայի մէջ, Գեննեսարեթի ծովակին մօտերը, անապատ տեղ մը կը գտնուէր: Ամէն կողմերէն ժողովուրդ եկած էին իր քարոզները լսելու: Օր մը, իրիկուան դէմ, աշակերտները Յիսուսի ըսին որ ժողովուրդը արձակէ,

մօտակայ գիւղերէն հաց դնելու և ուտելու համար: Յիսուս ըսաւ անոնց.

— Դուք կերակրեցէք ժողովուրդը:


Աշակերտները պատասխանեցին թէ իրենք չառ քիչ հաց ունին և երկու ձուկ, որ այդչափ ժողովուրդին չի բաւեր: Յիսուս հրամայեց որ բազմութիւնը 50ական հագի կարգ կարգ նստեցնեն: Ապա առաւ աշակերտներուն հացերը և ձուկը, օրհնեց, բաժնեց և աշակերտներուն յանձնեց որ ժողովուրդին տան: Ամէնքը կերան և կշտացան ու 12 դամբիւղ փշրանք աւելցաւ:

Ժողովուրդը Յիսուսը կը փառաբանէր ըսելով թէ «Ան է ճշմարիտ Մարգարէն»: Անոնք ուզեցին Յիսուսը թագաւոր հռչակել, բայց ան շուտ մը նաւ դրաւ առաքեալները որ դիմաց անցնին և ինքը լեռը բարձրացաւ աղօթելու համար:

Ի է. ԳԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Յիսուս սովորութիւն ունէր շատ անգամ գիւղերները լեռան մը վրայ առանձնանալ և աղօթել: Անգամ մը իրեն հետ առաւ Պետրոսը, Յակոբոսը և



Յիսուսի Այլակերպութիւնը

Յովհաննէսը: Գիշերը երբ Յիսուս կ'աղօթէր, աշակերտները տեսան որ անոր գէմքը այլակերպեցաւ, փառաւոր կերպարանք մը առաւ, անոր զգեստները ձիւնի պէս ձերմկցան:

եւ անա երեւցան նաև Մովսէս ու եղիա մարգարէները ու կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս այս փառաւոր տեսարանէն զմայլելով, ըսաւ.

— Տէ՛ր, աղէկ է որ հոս մնանք. եթէ կ'ուզես երեք վրան շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի ու միւսն ալ եղիային համար:

Երբ ան կը խօսէր տակաւին, լուսաւոր ամպ մը տեսան աշակերտները: Ամպին մէջէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր. «Այդ է իմ սիրելի Որդին, անոր մտիկ ըրէք»: Այս ձայնը աղդեց աշակերտներուն վրայ, որոնք վախցան:

Յիսուս ձայնեց անոնց և արթնցուց: Երբ վեր նայեցան, միայն տեսան Յիսուսը, որ իրենց քով կեցած էր:

Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Վ Ա Ր Դ Ա Վ Ա Ռ

1. Հին Հայերը հեքանոսական սօն մը ունէին: Վա- նասուր անուն ասուած մը ունէին, որուն մասնաւոր սօնախմբութիւնը կը կասարէին հայկական նոր սարիին, որ կը հանդիպէր Օգոստոս ամսուն: Այդ սօնը կը կոչուէր նաեւ ՆԱԻԱՍՍԱՐԴԻ կամ ԱՄԱՆՈՐԻ սօն եւ ասուածն ալ կը կոչուէր ԱՄԱՆՈՐԱԲԵՐ, այսինքն Ամանոր բերող:

Այդ սօնին կը պատէին նաեւ ՎԱՀԱԳՆ եւ ԱՆԱՀԻՏ ասուածները: Ընդհանրապէս այդ սօնին մեր նախնի- ները ինքզինքնին կը զարգարէին վարդերով եւ վարդի փուկօքեր կը նուիրէին իրենց ասուածներուն եւ ասուա- ծուհիներուն: Այդ պատճառով սօնը կոչուած է նաեւ ՎԱՐԴԱՎԱՍ: Նաւասարդի սօնը կը սօնէին Հայերը Բա- գաւանի մէջ (Ալաւկէթս), Եփրատ գետին եզերքը: Այս սօնին աղաւնի կը բուցնէին, իրարու վրայ ջուր կը սրսկէին:

2. Գրիգոր Լուսաւորիչ էր քրիստոնէութիւնը հաս- տատեց Հայոց մէջ, Հայոց Վարդավառի սօնը միացուց Յիսուսի Ալաւկէթսի սօնին յիշատակին հետ: Քրիստոն- ւաները պէտք է հոգիով նորոգուին այս սօնին: Եւ մենք Հայերս՝ պէտք է յիշենք մեր նախնիներն ու հոգիով վերանորոգուելու ձգտինք:

Ի Ը . Դ Ա Ս

ՅԻՍՈՒՍ ԿՕՐՇՆԷ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Օր մը, Յիսուս շատ յոգներ էր քարոզելով. ի- րիկուան դէմ մէկ քանի մայրեր մօտեցան Յիսուսի. իրենց մանուկները կը բերէին որ օրհնէ: Աշակերտ- ները, տեսնելով որ շատ յոգնած է Յիսուս, կ'ար- դիլէին մայրերուն՝ մանուկները Քրիստոսին քով տանելու: Բայց Յիսուս ըսաւ.

— Թողէք որ մանուկները ինծի գան և յի՛ արգիլէք, որովհետև երկինքի արքայութիւնը անոնց նման եղողներունն է:



Յիսուս կ'օրհնէ մանուկները

Ապա գիրկն առաւ զանոնք, շոյեց և օրհնեց: Ուրիշ օր մը, աշակերտները կը վիճաբանէին թէ ո՞վ մեծ պիտի ըլլայ արքայութեան մէջ. ապա հարցուցին Յիսուսի ալ: Այն ատեն Յիսուս մանուկ մը կեցուց անոնց առջև և ըսաւ.

— Ճշմարիտ կ'ըսեմ՝ ձեզի, եթէ սա փոքրիկ մանուկին պէս չըլլաք, չէք կրնար երկինքի արքայութիւնը մտնել. ո՞վ որ այս փոքրիկին պէս խոնարհ է, ա՛ն է մեծ՝ երկինքի արքայութեան մէջ:

ԻԹ. ԿԱՍ

Ա Ն Ա Ռ Ա Կ Ո Ր Դ Ի Ն

Յիսուս շատ անգամ առակներ կը պատմէր, անոնցմով իր ըսելիքը հասկցնելու համար: Այսպէս, անգամ մը հետեւեալ առակը պատմեց:

Մարդ մը երկու սրգի ունէր: Կրասերն ըսաւ իր հօրը. «Հա՛յր, սո՛ւր ինձ այն բաժինը, որ քու ինչքերէդ ինծի կ'իյնայ»: Հայրը երկու սրգիին մէջ բաժնեց իր սաացուածքը: Քիչ օր ետքը կրասերը հաւաքեց իրեն ինկած բաժինը և մեկնեցաւ հեռու աշխարհ: Այդ հեռու երկրին մէջ սպառեց իր բոլոր ունեցածը, անառակ կեանք մը վարելով:

Իր ունեցածը ուտելէն հացնելէն ետք, սաստիկ սով մը ախրեց երկրին մէջ, և սկսաւ չքաւորիլ: Ուստի մտաւ այդ երկրին բնակիչներէն մէկուն ծառայութեան մէջ: Տէրը զրկեց իր արար խոյ արածելու համար: Ան կ'ուզէր խոզերուն կերածէն իր փոքր կշտացնել, բայց սչ ոք կուտար իրեն:

Վերջապէս սկսաւ մտածել ու ըսել. «Ո՛րքան վարձկաններ կան իմ հօրս տունը, որոնք առաս հաց ունին և ես այստեղ սովածս կը կորսուիմ: Պիտի ելլեմ երթամ հօրս և պիտի ըսեմ անոր.

— Հա՛յր իմ, յանցանք դորձեցի Աստուծոյ և քու առջև. այլևս արժանի չեմ քու սրբիդ կոչուելու. զիս քու վարձկաններէդ մէկին սեղ դիր:

Ելաւ եկաւ հօրը: Երբ դեռ հեռուն էր, հայրը տեսաւ զայն և յուզուեցաւ գթութեամբ. վազեց, առնոր վիզը փաթթուեցաւ ու համբուրեց զայն: Որդին ըսաւ անոր.

— Հա՛յր իմ, յանցանք դորձեցի Աստուծոյ և քու առջև. այլևս սրբիդ կոչուելու արժանի չեմ:

Հայրը թոյլ չտուաւ որ սղան իր խօսքը վերջացնէ և ըսաւ ծառաներուն. «Անմիջապէս բերէք ամէնէն գեղեցիկ պատմուճանը և հազցուցէք. մատանի մը անցուցէք անոր մատին և կօշիկներ՝ ոտքերուն: Բերէք նաև պարարակ եզը և մորթեցէք. մեծ խնջոյք մը պիտի կատարենք, որովհետև իմ այս սրբին մեռած էր և ողջնցաւ, կորսուած էր և գտնուեցաւ»:

Բայց երէց սրբին դաշան էր. երբ դարձատուն և տեսաւ խնջոյքի պատրաստութիւնները, ըսաւ հօրը. «Այսքան երկար տարիներէ ի վեր ես քեզի կը ծառայեմ. երբեք անկատար չձգեցի քու հրամաններդ և դուն բնաւ ուլ մը չտուիր ինձի իմ բարեկամներու հետ ուրախանալու համար: Բայց երբ այդ սրբիդ իր ըսլոր ինչքերը սպառած վերադարձաւ, մորթեցիր պարարտ եզը»: Հայրը պատասխանեց. «Որդեա՛կ, դուն միշտ ինձի հետ ես և ինչ որ ունիմ քուկդ է. բայց պէտք է ուրախանալ, որ

բովհետև այս եղբայրդ մեռած էր և ողջնցաւ, կորսուած էր և գտնուեցաւ:



Լ. ԳԱՍ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՉԽԱՐԸ

Յիսուս անգամ մը երբ կը քարոզէր, Փարիսեցիներն ու դպիրները կը արտոնջային ըսելով թէ՛ Յիսուս մեղաւորներուն հետ կ'ուտէ ու կը խմէ, անոնց հետ կ'ապրի: Ուստի Յիսուս անոնց ուղղելով իր խօսքը, ըսաւ.

— Չեզմէ ո՞վ է այն, որ եթէ ունենայ 100 ոչխար, և անոնցմէ մէկը կորսնցնէ, 99 հաաը չի ձգեր անապատին մէջ, երթալ կորսուածը փնտուելու և գտնելու համար: Երբ որ գտնէ, իր ուտերուն վրայ կ'աննէ զայն, կ'ուրախանայ և վերադառնալով իր տունը, կը կանչէ իր բարեկամները և դրացիները, ու կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինձի հետ, որովհետև իմ կորսնցուցած ոչխարը գտայ»: Կ'ըսեմ ձեզի թէ՛ երկիրնքի մէջ աւելի ուրախութիւն կ'ըլլայ մէկ մեղաւորի մը դարձին վրայ, քան թէ 99 արդարներուն համար, որոնք ապաշխարելու պէտք չունին:



Կոբուսեալ Ոչխար

— Ես եմ Բարի Հովիւը: Բարի հովիւ մը իր ոչխարները կ'արածէ, անոնց առջեւէն կ'երթայ, ոչխարները անոր ետեւէն կ'երթան, որովհետեւ կը ճանչնան անոր ձայնը: Այսպէս, իմ ոչխարներս ալ կը հետեւին ինձի, որովհետեւ ես կը ճանչնամ զանոնք, անոնք ալ զիս կը ճանչնան: Ես վարձկան հովիւի պէս չեմ, ես իմ կեանքը կուտամ իմ ոչխարներուն համար:

ԼԱ. ԳԱՍ

ՄԵԾԱՏՈՒՆԸ ԵՒ ՂԱԶԱՐՈՍԸ

Յիսուս պատմեց նաև սա առակը:

— Ժամանակով հարուստ մարդ մը կար, որ կը հագնէր ծիրանի և բենեղ և ամէն օր չքեղ խնջոյքներ կը սարքէր: Կար նաև աղքատ մը Ղազարոս անուն, որ հարուստին դրան առջև ինկած կը մնար, վերքերով ծածկուած էր և կը փափաքէր անոր սեղանին փշրանքովը իր փորը կշտացնել: Ոչ ոք իրեն բան մը կուտար. շուները կուգային կը լիզէին անոր վերքերը: Օր մըն ալ Ղազարոս մեռաւ և հրեշտակներուն միջոցաւ տարուեցաւ Հայր Աբրահամի գոգը: Հարուստն ալ մեռաւ և տարուեցաւ դժոխք: Աչքերը բարձրացնելով տեսաւ Ղազարոսը Հայր Աբրահամին գիրկը: Գոչեց. «Հա՛յր Աբրահամ, սղարմէ ինձի, և զրկէ Ղազարոսը որ դայ մատին ծայրը ջուրը թրջէ և իմ պապակած լեզուս զովացնէ»: Աբրահամ պատասխանեց. «Տղա՛ս, յիշէ՛ որ քու կեանքիդ մէջ ամէն բարիք վայելեցիր, իսկ Ղազարոս թշուառութիւն, արդ, հիմա ան կը մխիթարուի, իսկ դուն կը չարչարուիս: Ատկէ զատ, մեր և քու միջև մեծ խորխորատ մը կայ, այնպէս որ անցնիլ, երթալ գալը անկարելի է»:



Մեծասունքը և Ղազարոս

Այն ատեն հարուստը ըսաւ. «Կ'ազաչեմ ուրեմն, հա՛յր, Ղազարոսը թող երթայ իմ հօրը աււնը, թող հասկցնէ որ հինգ եղբայրներս ալ հոս չգան, չչարչարուին»: Բայց Աբրահամ պատասխանեց. «Անոնք ունին Մովսէսն ու մարդարէները, թո՛ղ անոնց մտիկ ընեն: Եթէ անոնց մտիկ չեն ըներ, մեռելներէն մէկն ալ եթէ յարութիւն առնէ, չպիտի հաւատան»:

ԼԲ. ԳԱՍ

ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐԸ

Երկու մարդ ելան տաճարը աղօթելու, անոնցմէ մէկը Փարիսեցի էր, իսկ միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին կեցած էր և կ'աղօթէր սա պէս.

— Աստուածս, շնորհակալ եմ քեզմէ որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակողներուն, անիրաւններուն, շնացողներուն և կամ սա մաքսաւորին պէս չեմ. չարաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, ու ըստը ունեցածիս տասանորդը կուտամ:

Իսկ մաքսաւորը կեցած էր մէկ անկիւնը, չէր համարձակեր աչքն անգամ երկինք բարձրացնել, այլ իր կուրծքը ծեծելով, կ'ըսէր.

— Աստուած, ողորմէ՛ ինձի մեղաւորիս:

— Ձեզի կ'ըսեմ որ, ըսաւ Յիսուս, աս մարդը միւսէն աւելի արդարացած իր տունը դարձաւ. որովհետեւ ո՛վ որ իր անձը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, և ո՛վ որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

Հ Ն Թ Ե Ր Յ Ո Ւ Մ

Փ Ա Ր Ի Ս Ե Յ Ի Ն Ե Ր Ը

Փարիսեցիները Հեաններ էին, որ կը յարգէին Ս. Գիրքը եւ հրեական ասանդոքիւնները: Մեծ կարեւորութիւն կուտային արտաքին արարողութիւններուն. կը լուսացուէին, պահէին կը պահէին, երկայն ազօրքներ կ'ընէին. ցոյցի համար եւ հրապարակով ողորմութիւն կուտային, հեքանոսներուն եւ մախաւորներուն հետ յարաբերութիւն չէին ընէր: Կեղծաւոր էին, ցոյցի համար բարեպաշտութիւն կ'ընէին. այդ պատճառով ժողովուրդին առջեւ մեծ յարգ կը վայելէին, մեծ անուն ունէին եւ ազգեցիկ էին: Անոնք կը հաւատային թէ հոգին անմահ է, եւ մարմինները մեռնելէ ետք յարութիւն պիտի առնեն:

Փարիսեցիներուն մեջ Քարի եւ ասուածավալս մարդեր կային, բայց անոնց մեծամասնութիւնը կեղծաւորներ էին: Սիմէոն Ծերբունիւն, որ Յիսուս Մանուկը օրհնեց, Փարիսեցի մըն էր. նոյնպէս Փարիսեցի էին Յովսէփ Արեմաթացիւն, Նիկողայիմոս, Սողոս, որ յետոյ կոչուեցաւ Պօղոս Առաքեալ:

Քրիստոս շատ անգամներ եւ ամեն տեղ կը դատարարէր Փարիսեցիներուն կեղծաւորութիւնը ու վայ կը կարգար անոնց: Չանոնք կը նմանցներ ձեփուած գերեզմաններու, որոնք դուրսէն մախուր եւ գեղեցիկ կ'երեւ-

նան, բայց ներսը լի են ապականութիւնով: Կը նմանցներ պնակներու, գաւաթներու, որոնք դուրսէն մաքրուած են, բայց ներսը աղտեղութեամբ լեցուն են:

Փարիսեցիները միտ լսելով Յիսուսի յանդիմանութիւնները, ոյս պահեցին եւ որոշեցին սպաննել զայն եւ որոշումնին գործադրեցին:

Հիմա Փարիսեցի կը կոչուին այն մարդերը, որ կեղծաւոր են, կ'ուզեն սուրբ երեւնալ, բայց սիրով ու գործով չար են:


ԼԳ. ԴԱՍ

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԵՐԿՈՒ ԼՈՒՄԱՆ

Անդամ մը Յիսուս կեցած էր տաճարի դրան մօտիկ, ուր դրուած էր գանձանակ մը: Յիսուս կը դիտէր թէ ի՞նչպէս դրամ կը ձգէր ժողովուրդը: Շատ հարուստներ եկան անցան ու շատ դրամ ձգեցին:

Եկաւ նաև աղքատ, որբեւայրի կին մը, որ գանձանակը ձգեց երկու լումայ:

Յիսուս կանչեց իր աշակերտները և ըսաւ.
 — Տեսա՞ք սա կինը. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ
 այդ աղքատ որբեւայրին՝ գանձանակը ստակ ձգող-



Այրի կնոջ երկու լուծան

ներէն ամէնէն աւելին ձգեց. որովհետեւ ամէնքը
 իրենց աւելորդէն ձգեցին, բայց սա կինը՝ իր չքա-
 ւորութեանը մէջ՝ իր ունեցածը չունեցածը ձգեց:

ԼԳ. ԳԱՍ

ԲԱՐԻ ՍԱՄԱՐԱՑԻՆ

Յիսուս անդամ մը երբ կը քարոզէր, տեսաւ որ
 Հրեայ վարդապետ մը իրեն մօտեցաւ և փորձելով
 հարցուց.

— Վարդապետ, ի՞նչ ընելու եմ որ յաւիտե-
 նական կեանք ժառանգեմ:

Յիսուս ըսաւ անոր.

— Ի՞նչ գրուած է Օրէնքի գիրքին մէջ:


Ան պատասխանեց և ըսաւ.

— Պիտի սիրես քու Տէր Աստուածը քու բոլոր
 սրտովդ, քու բոլոր անձովդ, քու բոլոր զօրու-
 թիւնովդ և քու բոլոր միտքովդ և պիտի սիրես
 քու ընկերդ քու անձիդ պէս:

— Ուղիղ պատասխանեցիր, ըսաւ Յիսուս, ըրէ
 ատիկա և պիտի ապրիս:

Օրէնքի դիտնականը ըսաւ Յիսուսին. «Ո՞վ է
 իմ ընկերը»: Այն ատեն, Յիսուս հետեւեալ գեղե-
 ցիկ առակը խօսեցաւ.

— Մարդ մը երուսողէմէն երիքով կ'երթար.
 ճամբան աւաղակներու ձեռքն ինկաւ, որոնք զայն
 մերկացուցին, վիրաւորեցին ու կիսամահ թողու-
 ցին դացին: Այնպէս պատահեցաւ, որ անկէ կ'անց-



Բարի Սամարացի

նէր Հրեայ քահանայ մը, տեսաւ զայն և անցաւ
 գնաց: Նոյնպէս, Ղեւտացի մը եկաւ նոյն տեղը,
 տեսաւ և անցաւ գնաց: Սամարացի մը ճամբորդե-
 լով եկաւ նոյն տեղէն անոր քով, տեսաւ Հրեայ վի-
 րաւորը, գիթաց: Մօտեցաւ, պատեց անոր վէրքերը,
 վրան ձէթ ու գինի դնելով, ու դրաւ իր գրաստին
 վրայ, տարաւ պանդոկ մը ու դարձանեց զայն: Յա-

ջորդ օրը, երբ կը մեկնէր անկէ, հանեց պանդոկա-
 պետին տուաւ 2 դահեկան և ըսաւ. «Գարձան տար
 ատոր և ինչ ծախք որ ընես անոր համար, վերա-
 դարձիս պիտի վճարեմ քեզի»: Արդ, այս երեք ան-
 ձերէն ս՞րն է ամէնէն մօտիկ մարդը աւազակներուն
 ձեռքն ինկած անձին: Այն ատեն օրէնսդէտը պա-
 տասխանեց.

- Այն որ ողորմեցաւ անոր:
- Գնա՛ և դուն ալ այնպէ՛ս ըրէ, ըսաւ Յիսուս:

Լ. Ն. ԳԱՍ

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Երուզէմ քաղաքին դիմաց կը գտնուի Չիբեհ-
 եաց լեռը: Այս լեռան ետեւի կողին վրայ, գէպի
 Յորդանան գետ՝ կը գտնուի Բեթանիա անուն գիւղ
 մը: Բեթանիայի մէջ կը բնակէին Ղազարոս անուն
 մէկը և իր երկու քոյրերը Մարիամ և Մարթա: Յի-
 սուս շատ բարեկամ էր այս ընտանիքին. ամէն ժա-
 մանակ այս գիւղը եկած ատեն, կ'այցելէր այս բա-
 րի ընտանիքին:

Անդամ մը, Յիսուս Երուսաղէմ գտնուած ժամանակ, Փարիսեցիներու և դպիրներու ներկայութեան ըսաւ. «Ես և Հայրս մէկ ենք»։ Ուստի Հրեաները քարեր առին քարկոծելու համար զայն, բայց Յիսուս քաշուեցաւ անոնց մէջէն ու հեռացաւ Երուսաղէմէն։ Գնաց Յորդանան գետին մօտերը կը շրջէր։

Այդ ժամանակ, մէկը եկաւ Յիսուսին և լուր բերաւ թէ Ղազարոս հիւանդ է, անոր երկու քոյրերը զինքը զրկած էին Քրիստոսի։ Յիսուս սպասեց երկու օր ևս և ճամբայ ելաւ դէպի Բեթանիա։

Երբ Յիսուս Բեթանիա հասաւ, Ղազարոս արդէն մեռած էր և չորս օրէ ի վեր թաղուած։ Մարթա Յիսուսին դալը իմանալուն պէս, վազեց անոր առջև ու ըսաւ.

— Տէ՛ր, եթէ հոս եղած ըլլայիր, եղբայրս չէր մեռներ։ Բայց հիմա ալ, ես գիտեմ որ եթէ ուզես, Աստուած պիտի տայ քու ուզածդ։

— Եղբայրդ յարութիւն պիտի առնէ, պատասխանեց Յիսուս։

— Գիտեմ որ վերջին օրը յարութիւն պիտի առնէ, վրայ բերաւ Մարթա։

— Ես եմ Յարութիւնը և կեանքը, ըսաւ Յիսուս։ Մարթա դնաց Մարիամին ալ լուր տալու։ Տունը լեցուած էին մխիթարելու համար եկողներ։ Մարթա Մարիամի ականջին փսփսաց։ Մարիամ Յիսուսի գալը իմանալով անմիջապէս սաքի ելաւ ու մեկնե-

ցաւ։ Մխիթարողները կարծեցին թէ երկու քոյրերը գերեզման կ'երթան, իրենց եղբոր վրայ սղբալու։ Ուստի հետեւեցան անոնց։ Մարիամ Յիսուսը տեսնելով, Մարթայի հման խօսեցաւ և սկսաւ լալ։ Յիսուս ալ յուզուեցաւ և հարցուց թէ՛ ս'ըր թաղած են։ Յայց տուին Ղազարոսի գերեզմանը, որ քարայրի կը նմանէր։ Յիսուս պատուիրեց որ քարը վերցնեն։

— Տէ՛ր, ըսաւ Մարթա, հիմա հստած է, որովհետեւ չորս օրուան է։

— Ես քեզի չըսի՞ թէ՛ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը կը տեսնես, պատասխանեց Յիսուս։

Քարը մէկդի առին։


Այն ատեն Յիսուս աչքերը երկինք բարձրացուց ու ըսաւ. «Հա՛յր, շնորհակալ եմ քեզի որ ինձի լսեցիր, ես արդէն գիտէի որ Դուն միշտ զիս կը լսես. բայց զիս շրջապատող ժողովուրդին համար է որ կ'ընեմ, որպէսզի հաւատան թէ Դուն զրկեցիր զիս»։ Այս ըսաւ և բարձր ձայնով դռնէն.

— Ղազարոս, ե՛լ, դո՛ւրս եկուր։
Մեռելը անմիջապէս ելաւ։

ԼԶ. ԳԱՍ

Զ Ա Ք Է Ո Ս Ի Զ Ա Ի Ա Տ Ք Ը

Հրեաները լսելով Ղազարասի յարութիւնը, աւելի բարկացան և սրտչեցին Յիսուսը սպաննել: Յիսուս դարձեալ գնաց Յորդանանի մօտերը և կը քարոզէր:



Զափոս ծառին վրայ

Յիսուս անգամ մը կ'անցներ Երիփովէն, ուր կը բնակէր հարուստ մարդ մը Զափոս անուն, որ մաք-

սապետ մըն էր: Զաքէոս կ'ուզէր Յիսուսը տեսնել: Բայց սրովհետեւ անոր ետեւէն կ'երթային մեծ բազմութիւն մը և ինքը հասակով կարճ էր, ելաւ հոն գտնուած ծառի մը վրայ:

Յիսուս, անցած ատեն վեր նայեցաւ և գոչեց.

— Զաքէոս, վա՛ր իջիր ատկէ, որովհետեւ այսօր քու տունդ պիտի բնակիր:

Զաքէոս չուտ մը վար իջաւ և մեծ ուրախութեամբ բնգունեց: Հրեաները կը արտեջային որ Յիսուս դարձեալ մեղաւորներուն հետ կը բնակի:

Զաքէոս իր տունը բնգունելով Յիսուսը, ըսաւ.


— Տէ՛ր, հարստութեանս կէտը կուտամ աղքատներուն, և եթէ մէկը զրկած եմ, պատրաստ եմ չորս անգամ հատուցանելու:

— Այսօր փրկութիւն եղաւ քու տանդ, պատասխանեց Յիսուս: Դուն ալ Աբրահամի զաւակ մըն ես և ես եկած եմ կորսուածները փնտռելու և գտնելու:

ԼԵ. ԳԱՍ

ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱԴԷՍ ԿԸ ՄՏՆԷ

Թէպէտ Յիսուսի թշնամիները կ'ուզէին զինքը սպաննել, բայց ան դարձեալ սրտչեց երթալ Երուսաղէմ:



Յիսուս Երուսաղէմ կը մտնէ

Զիթենեաց լեռան սաքը Բերբազէ անուն գիւղ մը կայ: Երբ գիւղին մօտեցան, Յիսուս իր երկու աշակերտները զրկեց սան մը դրան առջև կապուած էչը բերելու համար: Նստաւ անոր վրայ ու գացին դէպի Երուսաղէմ:

Երբ Զիթենեաց լեռան վրայէն Երուսաղէմը տեսնուեցաւ, Յիսուսի հետևորդները սկսան ուրախանալ և գոչել:

— Օրհնեալ ըլլայ Դաւիթի Որդին, փառք Աստուծոյ անունով եկողին, օրհնութիւն ի բարձունս: Երուսաղէմ մեծ բաղմութիւն կար. Զաաիկը մօտ էր և ամէն կողմէն ուխտաւորներ եկած լեցուած էին քաղաքը: Երբ քաղաքին մէջ իմացուե-

ցաւ Յիսուսի գալուստը, մեծ բաղմութիւն մը սկսաւ անոր առջևը ելնել: առին ձիթենիի և արմաւենիի ճիւղեր և կը գոչէին:

— Ովսաննա՛ Դաւիթի Որդիին, Իսրայէլի թագաւորին:

Շատերը զգեստնին կը փռէին անոր գրաստին սաքերուն տակ, շատերն ալ կանանչ ճիւղեր ու ծաղիկներ կը սփռէին անոր անցնելիք աեղը: Երբ թափօրը Երուսաղէմ մտաւ, քաղաքը սաք ելաւ: Ամէնքը կը հարցնէին իրարու:

— Աս ո՞վ է:

— Գալիլիայի Նազարէթէն եկող Յիսուս մարգարէն է, կը պատասխանէին:

Իսկ Փարիսեցիները կատաղած, մօտեցան Յիսուսի և ըսին:

— Չե՞ս լսեր ի՛նչ կը գոչեն. ինչո՞ւ չես լսեցներ:

— Եթէ անոնք լուեն, պատասխանեց Յիսուս, քարերը պիտի աղաղակեն:

Կ Ա Յ Ս Ե Ր Դ Ր Ա Մ Ը

Փարիսեցիները և դպիրները մարդ զրկեցին Յիսուսին, որ փորձեն զայն և յանցանք մը դանեն անոր վրայ՝ ամբաստանելու համար: Անոնք ներկայացան Յիսուսին և հարցուցին.

— Վարդապետ, Հոռոմի կայսրին տուրք պէ՞տք է տալ: առ՞նք թէ չտանք:

Յիսուս պատասխանեց և պահանջեց որ դրամ մը բերեն և ցուցնեն իրեն: Երբ դրամը բերին, հարցուց անոնց.

— Դրամին վրայի նկարը կամ դիրը որո՞ւնն է:

— Կայսերն է, պատասխանեցին անոնք:


— Գացէք ուրեմն, ըսաւ Յիսուս, կայսերը կայսեր տուէք, Աստուածինն ալ Աստուծոյ տուէք:

Տ Ա Ս Ը Կ Ո Յ Ս Ե Ր ՈՒ Ա Ռ Ա Կ Ը

Յիսուս Երուսաղէմի մէջ սկսաւ քարոզել մեծ բազմութեան մը առջև: Ու կ'ըսէր անոնց.

— Երբ Աւետարանը քարոզուի բոլոր ազգերուն և ժամանակը հասնի, աշխարհի վերջը պիտի դայ: Այն ատեն արեգակը պիտի խաւաբի, լուսինը լոյս չպիտի տայ այլևս, աստղերը երկինքէն պիտի թափին, երկինքի հիմերը պիտի խախտին: Սարսափը պիտի արեւ երկրի վրայ, մարդիկ վախէն պիտի չորնան: Այն ատեն պիտի երեւնայ երկինքին վրայ Մարդու Որդիին նշանը: Բոլոր ազգերը պիտի անտեսեն Մարդու Որդին երկինքի ամպերուն վրայ. անոր հրեշտակներն ալ պիտի երեւնան: Պիտի հաւատքեն աշխարհի չորս անկիւններուն մէջ ցրուած Աստուծոյ ընտրեալները: Իսկ այս բաները ե՞րբ պիտի ըլլան, ոչ ոք գիտէ, բացի Աստուծմէ: Այդ բոլորը յանկարծ տեղի պիտի ունենան: Այն ատեն երկինքի արքայութիւնը պիտի նմանի Տասը կոյսերուն:

Տասը կոյսեր կային, որոնց հինգը իմաստուն էին, հինգը՝ յիմար: Անոնք ելան փեսային ու հարսին առջև: Ամէնքն ալ ունէին իրենց լապտերները:



Յիմար Կոյսերը

Իմաստունները իրենց լապտերներուն հետ առած էին ամանով իւզ, իսկ յիմարները չէին առած: Փեսան ուշացաւ: Յիմարներուն լապտերները սկսան մարիլ. այն ատեն անոնք իմաստուններէն խնդրեցին որ իրենց ունեցած եղէն տան: Իսկ իմաստունները

պատասխանեցին. «Գացէք վաճառականէն դնեցէք, որովհետեւ կրնայ ըլլալ որ մերինն ալ չբաւէ մեզի»: Երբ անոնք գացին դնելու, կէս գիշերին փեսան եկաւ: Իմաստունները անոր առջեւը ելան և անոր հետ ներս մտան: Ապա եկան յիմարները, դուռը զարկին, բայց փեսան ներսէն ձայնեց ու ըսաւ.

— Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ չեմ ճանչնար զձեզ:

Ուրեմն, միշտ արթուն կեցէք, որովհետեւ չէք գիտեր թէ ե՛րբ Մարգու. Որդին պիտի գայ:

Խ. ԳԱՍ

Վ Ե Ր Ձ Ի Ն Ը Ն Յ Ր Ի Ք Ը

Զատիկի տօնին Հինգշաբթի օրը Հրեաները սովորութիւն ունէին Զատիկի Գառը ուտելու: Յիսուս պատուիրեց իր աշակերտներուն որ պատրաստեն Գառը, ընթրիքի բազմելու համար:

Սեղանը պատրաստուած էր: Յիսուս իր 12 առաքեալներուն հետ գնաց որոշուած տունը: Սեղան նստելէ առաջ, ան ուզեց խոնարհութեան գեղեցիկ օրինակ մը տալ: Կապեց զենջակ մը, առաւ կոնքը և սկսաւ իր աշակերտներուն ստքերը լուալ: Երբ Պետրոսի առջև եկաւ, ան ըսաւ.





Յիսուս կը լուայ Պետրոսի ոտերը

- Տէ՛ր, թոյլ չեմ տար որ լուաք իմ ոտքերը:
- Եթէ չլուամ այդ ոտքերը, ինձի հետ գործ չես ունենար այլևս, պատասխանեց Յիսուս:
- Տէ՛ր, գոչեց Պետրոս, լուա՛ որ միայն ոտքերս, այլև ձեռքերս ու գլուխս:
- Բաւական է ոտքերդ լուալը, դուն մաքուր ես, բայց ոչ բոլորովին:
- Ապա կարգով լուաց անոնց ոտքերը, Պետրոսէն սկսելով, մինչև Յուդայի ոտքերը: Լուացումէն ետք, հանեց զենջակը, հազաւ իր հագուստները, սեղան նստաւ և ըսաւ.
- Դիտէ՞ք ի՛նչ ըրի: Դուք զիս կը կոչէք վար-

դապեա և Տէր. ճիշտ կ'ըսէք: Արդ եթէ ես ձեր ոտքերը լուացի, դուք ալ պարտաւոր էք իրարու ոտք լուալ: Ես օրինակ տուի ձեզի:

Ապա Յիսուս առաւ հացը, օրհնեց, կտրեց և բաժնելով, ըսաւ.

— Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը:

Յետոյ, առաւ գինիի բաժակը և ըսաւ.

— Առէ՛ք, խմեցէ՛ք ասկէ, այս է իմ արիւնը: Նոր Ուխտի արիւնը, որ պիտի թափի շատերու փրկելու թեան համար: Ամէն անգամ կատարեցէք այս՝ իբրև իմ յիշատակը:

Յիսուս յուզուեցաւ տեսնելով որ Յուդան չի զղջար: Անիկա դացեր Դպիրներուն և Փարիսեցիներուն հետ խօսք մէկ ըրեր էր. 30 արծաթի փոխարէն խոստացեր էր իր վարդապետը մատնել:

Յիսուս ըսաւ ավարութեամբ.

— Ճշմարիտ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ:

Բոլոր աշակերտները տակն ու վրայ եղան, չփութեցան և իրարու կը հարցնէին. «Միթէ ե՞ս եմ, միթէ ե՞ս եմ»: Յովհաննէս Յիսուսին հարցուց թէ՞ ո՞վ է: Յիսուս պատասխանեց.

— Որի որ տամ առաջին պատասխան, ան է:

Եւ առաջին պատասխան տուաւ Յուդային: Ան ալ փոխանակ զղջալու, տեսնելով որ յայտնուեցաւ իր միտքը, ելաւ սեղանէն ու մեկնեցաւ:

ԽԱ. ԴԱՍ

ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ

Յուդայի մեկնելէն ետք, Յիսուս ըսաւ իր աշակերտներուն.


— Ես պիտի երթամ, ձեր մէջէն պիտի բաժնուիմ, բայց իմ բաժնուելէս առաջ պատուէր մը կուտամ ձեզի. «Սիրեցէք զԻրար, ինչպէս ես ձեզ սիրեցի»:

Յետոյ երկար խօսեցաւ Յիսուս, իր սիրաւ բացաւ, յայտնեց թէ իր վերջին վայրկեանները եկած են: Քաջալերեց իրենները որ չյուսահատին: Յայտնեց թէ զինքը բռնելու պիտի դան քիչ ետքը և աշակերտները ցիր ու ցան պիտի ըլլան: Երբ Պետրոս ըսաւ թէ ամէնքը փախչին, ինք պիտի չփախչի, Յիսուս պատասխանեց.

— Աքաղաղը խօսելէ առաջ՝ երեք անգամ զիս պիտի ուրանաս:

Յիսուս և իր աշակերտները ելան. մութ գիշեր էր: Քաղաքէն դուրս Զիթենեայ լեռան առջիկ կողմը, վարը ձորին մօտ պղտիկ հիւղակ մը կար, հիւղակին բսլորաիքը կար ձիթենիի մեծ պարտէզ մը: Յիսուս շատ անգամ սովորութիւն ունէր այս պարտէզը երթալու: Այս անգամ ալ իր աշակերտներուն հետ գնաց այս պարտէզը:

Երբ Գեթսեմանի պարտէզը հասան, Յիսուս ըսաւ իր աշակերտներուն.



Յուդայի Համբոյրը

— Դուք կեցէք այստեղ, ես երթամ աղօթելու: Իրեն հետ առաւ Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը, հեռացաւ և ըսաւ անոնց.

— Հոգիս շատ ախուր է. կեցէք և հսկեցէք: Ապա, քիչ մը ևս հեռացաւ, երեսին վրայ ինկաւ և աղօթեց ըսելով.

— Հա՛յր, եթէ կարելի է, այս բաժակը ինձմէ հեռացուր. բայց քու կամքդ թող ըլլայ:

Յեռոյ եկաւ երեք աշակերաներուն յօտ և ըսաւ .

— Սիմոն, կը քնանա՞ք, չկրցա՞ք ժամ մը արթուն մնալ ինծի հետ : Արթուն կեցէք և աղօթեցէք :

Դարձեալ հեռացաւ Յիսուս աղօթելու համար : Դարձին՝ տեսաւ որ աշակերաները քնացած են : Վերադարձաւ, նորէն աղօթքի կեցաւ : Քրտինքը պատեց անոր դէմքը, և կաթիլները արիւնի կաթիլներու նման դետին կը հոսէին : Այն ատեն տեսաւ հրեշտակ մը, որ քաջայերեց զինքը :

Եկաւ աշակերաներուն յօտ և ըսաւ .

— Ելէ՛ք հիմա և երթանք . ժամը եկած է . ահա Մարգու Որդին պիտի մատնուի մեզաւորներուն ձեռքը : Ելէ՛ք, ահա կը մօտենայ զիս մատնողը :

Յիսուս կը խօսէր տակաւին, երբ ահագին բազմութիւն մը եկաւ մտաւ պարտէզ . անոնք վառուած ջահեր ունէին, սուրեր, դանակներ : Անոնց առջեւէն կուգար Յուդան, որ մօտեցաւ Յիսուսին և բարեւելու ձեւով համբուրեց զայն :

— Յուդա՛, ըսաւ Յիսուս, համբուրելով կը մատնես զիս :

Այն ատեն բռնեցին Յիսուսը և կապեցին : Յիսուս բնաւ գիմազրութիւն չըբաւ . միայն ըսաւ .

— Ամէն օր ձեր մէջ, աաճարը կը քարոզէի, այն ատեն չբռնեցիք զիս, գիշերով կ'ուզէք բռնել հիմա :

Պետրոս սուրը քաշեց Յիսուսը ազատելու համար, բայց Յիսուս պատուիրեց անոր սուրը տեղը դնել, ըսելով . «Սուր բարձրացնողը սուրով կը կորսուի» :

ԽԲ. ԴԱՍ

ՅԻՍՈՒՍ ԴԱՏԱԻՈՐՆԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ

Տարին Յիսուս Աճճա քահանայապետին առջև : Աննա հարցուց Յիսուսի թէ ի՞նչ է իր քարոզածը : Յիսուս պատասխանեց .

— Ես ամէն ատեն յայանի խօսեցայ . շատերը զիս լսեցին . ինչո՞ւ ինծի կը հարցնես, լսողներուն հարցուր :

Ծառաներէն մէկը ապտակ մը զարկաւ, ըսելով .

— Այդպէ՞ս կը պատասխանեն քահանայապետին :

— Եթէ գէշ բան մը խօսեցայ, վկայէ՛, ըսաւ Յիսուս, իսկ եթէ բարի խօսեցայ, ինչո՞ւ կը զարնես :

Աննա կապել տուաւ Յիսուսը և զրկեց կայիա . վիա քահանայապետին տունը : Հոն ալ սկսան դատել Յիսուսը : Ամէն կողմէն սուտ վկաներ բերին, հաստատելու համար թէ մահապարտ է ան : Բայց չյաջողեցան : Կայիափայի սիրտը նեղուելով, ստք ելաւ և ըսաւ .

— Կ'երդուընցնեմ քեզ որ ձիշտն ըսես, դո՞ւն ես Բերիստոսը, Աստուծոյ Որդին :

— Դուն կ'ըսես, պատասխանեց Յիսուս :

Կայիափա իր հանդերձը պատուեց, գոչելով .

— Ա՛լ ի՞նչ պէտք կայ վկաներու, լսեցիք ա՛սոր հայհոյութիւնը :

— Մահապա՛րտ է, մահապա՛րտ է, գոչեցին ամէնքը և սկսան թքնել անոր երեսը, ծեծել, ապտակել և ըսել:

— Մարգարէացիք, Քրիստոս, ո՞վ է քեզ զարնողը: Երբ առաւ եղաւ, բոլոր քահանայապետները, դպիրները և մեծերը վճռեցին որ Յիսուսը սպանեն:

ԽԳ. ԴԱՍ

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒՄԸ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՎԱԽՃԱՆԸ

Պետրոս իր խոստումին համեմատ, չուզեց հեռանալ Յիսուսէն: Երբ Գեթսեմանի պարտէզէն բռնեցին ու կը տանէին զայն, ինքն ալ ետեւնուն հեռուէն հեռու կը հետեւէր:

Երբ Յիսուս՝ քահանայապետին առջև հանած կը դատէին, Պետրոս բակն էր զինուորներուն հետ և վառուած կրակին քով կը տաքնար: Այն ատեն եկաւ քահանայապետին ազախիններէն մէկը և ըսաւ.

— Դո՛ւն ալ Յիսուս Նազովրեցիին հետն էիր:

— Ես չեմ ճանչնար զայն, ըսաւ Պետրոս, ուրանալով իր վարդապետը:

Քիչ ետք, ուրիշ ազախին մը տեսնելով զայն, ըսաւ. «Աս ալ Յիսուս Նազովրեցիին հետն էր»:

Պետրոս կրկին ուրացաւ, ըսելով թէ չի ճանչնար զայն: Քիչ յետոյ ուրիշ մը եկաւ և ըսաւ.

— Իրաւցնէ դուն ալ անոր աշակերտներէն մէկն ես, դուն ալ Գալիլիացի ես, լեզուդ զքեզ կը մտանէ:

Պետրոս սկսաւ երդուըննալ, ըսելով թէ չի ճանչնար այդ մարդը: Այդ միեւնոյն պահուն աքաղաղը խօսեցաւ: Այդ միջոցին Յիսուս կ'առաջնորդուէր զինուորներուն կողմէ, բակէն կ'անցնէր, տեսաւ Պետրոսը և ախար կերպով նայեցաւ անոր:

Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը թէ՛ «Մինչև հաւուսն խօսիլը երեք անգամ պիտի ուրանաս զիս»:
Դուքս ելաւ Պետրոս և սկսաւ դառնապէս լալ:

Յուդա երբ տեսաւ որ Յիսուսը մահուան դատապարտեցին, զղջաց բրածին վրայ. իր առած 30 արծաթը տարաւ ետ սուսաւ քահանայապետին ու դպիրներուն՝ ըսելով.

— Ես մեզք գործեցի անմեղ արիւնք ձեզի յանձնելով:

Բայց անոնք պատասխանեցին.

— Մեզի ի՛նչ, քու գիտնալիք բանդ է:

Այն ատեն դրամը նետելով աածարին մէջ, Յուդա դնաց ինքզինքը կախեց: Իսկ իշխաններն ու քահանաները դրամն առնելով ըսին.

— Պէտք չէ այս դրամը պահել կամ գանձանակը ձգել, որովհետև արեան գին է:

Ապա որոշեցին և գնեցին ազարակ մը, ու անիկա օտարականներուն գերեզմանոց դարձուցին:

ԽԴ. ԴԱՍ

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԵՒ ՇԵՐՈՒԼԴԵՍԻ ԱՌՁԵՒ

Հոռովմայեցի կուսակալն էր այդ ժամանակ Պիղատոս: Հրէից իշխանները և դպիրները որոշած էին մահուան դատապարտել, բայց առանց Պիղատոսի հրամանին չէին կրնար: Ուստի Յիսուսը տարին անոր:

— Ի՞նչ ամբաստանութիւն ունիք ասոր դէմ, հարցուց Պիղատոս:

— Այս մարդը ժողովուրդը կը մոլորեցնէ, կայսեր հարկ վճարելը կ'արդիլէ և ինքզինքը թագաւոր կը կոչէ, պատասխանեցին:

Յիսուս լուս կը մնար: Պիղատոս հարցուց.

— Ձե՞ս լսեր քեզի դէմ ո՛րքան ամբաստանութիւններ կ'ընեն:

Յիսուս դարձեալ չպատասխանեց: Պիղատոս զարմացաւ. առաւ Յիսուսը ներս իր սենեակը տարաւ և հարցուց.

— Դո՞ւն ես Հրեաներուն թագաւորը:

— Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ, պատասխանեց Յիսուս. և թէ այս աշխարհէն ըլլար, իմ ծառաները կը պատերազմէին, որպէսզի Հրեաներուն ձեռքը չմասնուիմ:

Պիղատոս դուրս ելաւ և Հրեաներուն ըսաւ.

— Ես այս մարդուն քով յանցանք չեմ գտներ:

Աւելի ևս սկսան աղաղակել և գոռալ:

— Այս մարդը Գալիլիայէն սկսեալ ամբողջ Հրէաստանի ժողովուրդը կը խռովեցնէ:

Պիղատոս ասկէ իմանալով որ Յիսուս Գալիլիացի է, Գալիլիայի թագաւոր Հերովդէս Փոքրին զըրկեց: Այդ ատեն Հերովդէս ալ Երուսաղէմ կը գըտնուէր: Ան լսած էր Յիսուսի հրաշքները և կ'ուզէր տեսնել զայն: Հերովդէս շատ հարցումներ ըրաւ Յիսուսի, բայց բնաւ պատասխան մը չտացաւ: Այն ատեն ինք ալ սկսաւ ծաղրել և կրկին զրկեց Պիղատոսի:

Պիղատոս դարձեալ ժողովուրդին սկսաւ խօսիլ և ըսել թէ Յիսուս յանցանք չունի, Հերովդէս ալ յանցանք մը չէ գտեր անոր վրայ, ուստի պէտք է արձակել զայն:

Զատկի տօնին առթիւ, Հրեաները սովորութիւն ունէին դատապարտեալ մը արձակել: Այդ ատեն բանտն էր Բարաբբա անունով աւազակ մը, որ սուս մարդարէ մըն էր: Պիղատոս ժողովուրդին հարցուց որ երկուքէն ո՞րը կ'ընտրէ, Յիսուսը թէ Բարաբբա էր: Իշխանները և քահանաները դրդոած էին ժողովուրդը, որ կը պտտար. «Բարաբբան արձակէ»:

— Իսկ Յիսուսը ի՞նչ ընեմ, հարցուց Պիղատոս:

— Ո՞ւրիշ հանէ, խա՛չը հանէ կը պտտային:

Պիղատոս շատ աշխատեցաւ, բայց անօգուտ ըլլալը տեսաւ: Այն ատեն Յիսուսը յանձնեց Հրեաներուն և զինուորներուն որ չարչարեն:

ԽՆ. ԴԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ

Զինուորները Յիսուսը առին իրենց հրապարակը տարին: Բոլոր գուռերը անոր գլուխը ժողովուրդացաւ: Հանուկացին, սիւնի մը կապեցին և խորագանով ձողկեցին:

Որովհետև Յիսուս ինքզինքը թագաւոր անուանած էր, կռնակը կարմիր վերարկու մը ձգեցին, գլուխը փուչէ պսակ մը դրին, ձեռքն ալ եղէգ մը սոււած՝ վրան կը խնդային և առջեւը ծունկի գալով,

— Ո՛ղջ լեր, թագաւոր Հրէից, կ'ըսէին:

Երեսը թքներով, ձեռքէն եղէգը կ'առնէին ու գլխուն կը դարնէին: Այսպէսով Քրիստոսի գլուխը արիւնլուայ ըրին: Պիղատոս Յիսուսի այս վիճակը տեսներով գթաց, ան կը յուսար թէ Հրեաներն ալ պիտի գթային: Ուստի դարձեալ Յիսուսը ժողովուրդին ցոյց տուաւ և յայտնեց թէ անմեղ է. ուղեց արձակել, բայց ամբոխը կը պոռար շարունակ.

— Խա՛չը հանէ, խա՛չը հանէ:

Պիղատոս դարձեալ աշխատեցաւ, չառ ջանաց որ Յիսուս ազատուի, բայց անհնար եղաւ:

— Եթէ զինքը արձակես, կայսեր բարեկամ չես, կը գոչէին անոնք. ուստի Պիղատոս վախցաւ. ջու-

րով կոնք մը բերել տուաւ, ձեռքերը լուաց՝ ըսելով.

— Ես այս անմեղին արեան համար յանցանք չունիմ:

— Անոր արիւնը մեր և մեր որդիներուն վիզը թող ըլլայ, կը պոռային անոնք:

Այն ատեն Պիղատոս Յիսուսը անոնց ձեռքը տուաւ խաչելու համար:


ԽՉ. ԴԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Զինուորները Յիսուսին վրայէն կարմիր վերարկուն մէկդի առին ու խաչը ուսը տուած՝ սկսան դէպի Գողգոթա երթալ: Երուսաղէմի փողոցներէն անցած ատեն, բարեպաշտ կիներ կուլային անոր վրայ: Յիսուս անոնց դառնալով, ըսաւ.

— Ի՞մ վրայ մի՛ լաք, այլ ձեր և ձեր դաւակներուն վրայ լացէք. որովհետև օր պիտի դայ, որ դաւակ չունեցողին երանի պիտի տան:

Խաչը այնքան ծանր էր, որ Յիսուս չէր կրնար տանիլ: Կէս ճամբան հանդիպեցան Սիմոն Կիրեանացի անուն մէկուն, որ իր արտէն կը դառնար. զինուորները բռնի խաչը անոր կռնակը դրին:



Յիսուս խաչին վրայ

Գողգոթա հասնելէ ետքը, Յիսուսի առին լեզիով խառնուած գինի. սովորութիւն էր ասիկա, բոլոր խաչուողներուն կուտային որ ցաւ չզգան: Յիսուս չուզեց ճաշակել այդ դառն ըմպելին: Վեր-

ջապէս զինքը գամեցին խաչին վրայ ու խաչը արնակեցին: Իրեն հետ խաչեցին նաև երկու աւազակներ, ու անկեցին մէկը աջ կողմը, միւսը՝ ձախ կողմը:

Ամէն խաչուողի խաչին վրայ տախտակ մը կը կենար, որուն վրայ գրուած կ'ըլլար գործած յանցանքը: Պիղատոս տախտակի մը վրայ գրեց ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԷՒՑ: Քահանայապետները չուզեցին այսպէս գրուիլը, բայց Պիղատոս ըսաւ.

— Ինչ որ գրեցի գրեցի:

Զինուորները Յիսուսի զգեստները իրենց մէջ բաժնեցին. անոր պատմուճանն ալ առանց կարի ըլլալուն համար, վիճակ ձգեցին:

Յիսուս անհանդուրժելի ցաւերու մէջ էր. Հըրեաները, Դպիրները, Փարիսեցիները կը ծաղրէին և,

— Եթէ Քրիստոսն է, թող իջնէ խաչէն, կ'ըսէին:

— Եթէ Հրէից թագաւորն ես, փրկէ ինքզինքդ:

Երկու աւազակներէն մէկն ալ կը ծաղրէր Յիսուսը, բայց միւսը ըսաւ.

— Մենք մեր արժանի պատիժը գտանք, իսկ ան անմեղ է, ինչո՞ւ կը ծաղրես: Տէ՛ր Յիսուս, երբ արքայութեամբդ գաս, յիշէ՛ զիս:

— Այսօր հետս գրախտին մէջ պիտի ըլլաս, պատասխանեց Յիսուս:

Յիսուս խաչին վրայ էր, երբ երկինքը մթնեց, երկիրը խաւարով պատուեցաւ: Յիսուս խաչին վրայէն զինքը չարչարողներուն համար կ'աղօթէր:

— Հա՛յր, ներէ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն: Ապա գոչեց ան.

— Աստուա՛՛ծ իմ, Աստուա՛՛ծ իմ, ինչո՞ւ թողուցիր զիս: Բիչ յետոյ յայանեց թէ ծարու էր:

— Զինուորին մէկը լեղիով խառն քացախ թաթխուած սղուեց մը երկարեց Յիսուսի բերնին: Ան ճաշակեց և գոչեց.

— Ամէն բան կառարեալ է: Եւ յետոյ ըսաւ.

— Հա՛յր, հոգիս քու ձեռքդ կ'աւանդեմ:

Գլուխը ծռեց, հոգին աւանդեց: Երկիրը շարժեցաւ, գերեզմանները բացուեցան, սաճարին մեծ վարագոյրը մէջտեղէն վերէն վար պատռեցաւ: Հոն գանսուղ զինուորներուն հարիւրապետը խոստովանեցաւ, բսելով. «Արդարեւ Աստուծոյ Որդի է սա»:

Խ Ա Չ Ի Տ Օ Ն Ե Ր Ը

Գ Ի Ի Տ Խ Ա Չ

Ա. Խաչը՝ Քրիստոսի մահեկն ետք՝ նետուած էր Երուսաղեմի մեկ աղբակոյտին մէջ, որ կը գտնուէր Գողգոթայի մօտիկ:

Երբ որ Կոստանդիանոս բազաւորին մայրը՝ Հեղիոնէ բագուհին եւ անոր կիներ քրիստոնէայ եղան, եւ երբ Կոստանդիանոս 324 բուականին՝ քրիստոնէութիւնը իբ-

րեւ պետութեան կրօնք ընդունեց, այն ժամանակ՝ Հեղիոնէ բագուհին ուզեց Երուսաղեմ երբալ եւ Քրիստոսի Խաչը գտնել: Գնաց Երուսաղեմ եւ մեծ նիգերով ու զոհողութիւնով պրպտումներ քաւ, հարցուփորձ ընելով իմացաւ թէ Խաչը նետուած է աղբանոցին մէջ: Փորել տուաւ այն տեղը, ու գտնուեցան երեք խաչեր, որոնցմէ մէկը Յիսուսինն էր, միւս երկուքն ալ երկու աւազակներունն էին:

Այս դէպքը իբրեւ մեծ ու յիշատակելի օր մը նրկասուեցաւ եւ տօն սանմանուեցաւ:

Այդ տօնն է որ կը կոչուի ԳԻԻՏ ԽԱՉ:

Վ Ե Ր Ա Յ Մ Ա Ն Խ Ա Չ

Քրիստոսի եօթներորդ դարուն, Պարսից Խոսրով բագաւորը Հռոմներուն դէմ պատերազմ հրատարակեց, մեծ բանակներով քաղց յունական քաղաքներուն վրայ եւ հասաւ մինչեւ Մամւրա ծովը, մինչեւ Սկիւսար: Արշաւեց Սիւրիա եւ Պաղեստին, ու գրաւեց Երուսաղեմը:

Յիսուսի Խաչը, որ Երուսաղեմ կը գտնուէր, գերի տարաւ Պարսկաստան: Բոլոր քրիստոնէայ ժողովուրդները մեծ սուգի մէջ մտան, որովհետեւ իրենց համար նուիրական եղող Խաչը գերի տարուէր էր:

Բիւզանդիոնի նշանաւոր կայսրերէն մէկը, որ կը կոչուէր Հերակլ, ուզեց Քրիստոսի Խաչը ազատել: Եր-

կարատե ու կատաղի պատերազմներ ըրաւ, քանի մը անգամներ յաղթեց Պարսից քաղաւորին, եւ վերջապէս խաչը ազատեց:

Խաչը տարուեցաւ Երուսաղէմ, ուր Պաղեստինի այն ասեմուան Եպիսկոպոսը մեծ հրապարակի մը վրայ սնկեց գայն, որպէսզի բոլոր հաւատացեալները տեսնեն եւ ուրախանան:

Այս հանդէսը՝ իբրեւ տօնախմբութիւն՝ որոշուեցաւ կատարել ամեն տարի: Ահա այդ տօնն է, որ բոլոր Եկեղեցիները կը կոչեն ՎՆՐԱՅՄԱՆ ԽԱԶ:

Վ Ա Ր Ա Գ Ա Յ Խ Ա Չ

Հռիփսիմեան կոյսերը վաճառյ մօտ վարագայ վանքը ապրած են քիչ մը ասեմ: Ս. Հռիփսիմէ կոյսը իրեն վիզէն կախած ունեւ տրուեցան խաչի մը կտոր:

Երբ Հայոց Տրդատ քաղաւորը հալածանք հանեց քրիստոնեաներուն դէմ, Հռիփսիմեան կոյսերը ստիպուեցան փախչիլ վարագայ լեռէն:

Այդ ժամանակ, խաչին կտորը՝ իրենց գտնուած տեղը, վարագայ լեռան վրայ, հողին տակ պահեցին: Ժամանակ անցնելէ ետքը, խաչափայտին այդ մասը գտնուեցաւ Հայոց կողմէ:

Ուստի հայ Եկեղեցին մասնաւոր տօնախմբութիւն մը կը կատարէ անոր յիշատակին համար: Այդ տօնն ալ կը կոչուի ՎՆՐԱՅՄԱՅ ԽԱԶԻ ՏՕՆ:

ԽԵՒ ԴԱՍ

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Ք Ա Ղ Ո Ւ Մ Ը


Իրիկուան դէմ, Պիղատոսի հրամանով, զինուորները գացին խաչուածները վար առնելու և թաղելու: Որովհետեւ մեռած չէին ըլլար, սովորութիւն էր որ խաչուողներուն ծունկերը կը կտտրատէին, կը ջարդէին. այդ ցաւէն կը մեռնէին: Զինուորները ջարդեցին Յիսուսի երկու կողմը խաչուած աւագակներուն ծունկերը:

Բայց տեսնելով որ Յիսուս արդէն մեռած էր, անոր ծունկերը չխտրտակեցին:

Միայն զինուորներէն մէկը, մեռած ըլլալն իմանալու համար, նիզակով Յիսուսի կողը խոցեց. անկէ վազեց արիւն և ջուր:

Յովսէփ Արեմաթացի անուն հարուստ մարդ մը կար, որ Հրեաներու ծերակոյտէն մէկն էր: Ան Պիղատոսէն խնդրեց որ Յիսուսի մարմինը վերցնէ ու թաղէ: Պիղատոս ընդունեց:

Կար նաև Նիկողեմոս անունով հարուստ մէկը, որ նոյնպէս Հրեայ երեւելիներէն մէկն էր: Ան ալ խունկ տարաւ. երկուքը մէկ խաչէն վար առին զայն: Հարուստ և երեւելի մարդոց մարմինը սովորաբար



Յիսուսի Թաղումը

խուռնկերով կ'օծէին. այնպէս ալ ըրին Յիսուսի, պատեցին զայն ու թաղեցին մօտիկը դանուած պարտէզին մէջ: Այս պարտէզը Յովսէփ Արեմաթացիինն էր. գերեզմանն ալ իրեն համար պատրաստել տուածն էր:

Հրէից իշխանները Պիղատոսին ըսին:

— Ան խարերան իր ողջ եղած ատեն ըսած էր թէ «Երեք օրէն յարութիւն պիտի առնեմ»: ուստի գերեզմանին քով երեք օր պահապան կեցուր, չըլլայ թէ աշակերաները դան գիշերը դողնան մարմինը և ձայն հանեն թէ յարութիւն առած է:

Պիղատոս յանձնարարեց որ իրենց ուղածին պէս երթան պահպանութիւն ընել տան: Անոնք ալ գացին գերեզմանին դուռը կնքեցին և պահապաններ դրին:

ԽԸ. ԳԱՍ

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի մարմինը երկու օրէ ի վեր կը գըտնուէր գերեզմանի մէջ: Կիրակի առաւել կանուխ, Մարիամ Մագդաղիկացի, Յակոբի մայրը Մարիամ և Սողոմէ եկան գերեզման՝ Յիսուսի մարմինը օծելու: Ճամբան իրարու կ'ըսէին:

— Ո՞վ պիտի վերցնէ գերեզմանին դուռը:

Հոն հասնելով տեսան որ քարը մէկդի առնուած էր և գերեզմանն ալ պարտպ էր: Մարիամ Մագդաղիկացի շուտով դարձաւ առաքեալներուն



Մարիամ Մագդաղինացի եւ Յիսուս

պատմելու համար: Բայց միւս կիները տեսան հրեշտակ մը, որ ըսաւ իրենց.

— Մի՛ վախ՛աք: Գիտե՛մ որ Յիսուս նազովրեցին կը փնտռէք. բայց ինչո՞ւ մեռելներուն մէջ կը փնտռէք զայն. յարութիւն առաւ, հոս չէ: «Զէ աստ, այլ յարեալ»: Գացէք եւ ըսէք աշակերտներուն:

Յետոյ եկան Պետրոս եւ Յովհաննէս: Մագդաղինացի անոնց ըսեր էր թէ Յիսուսի մարմինը գողցուած էր գերեզմանէն: Ուստի կ'ուզէին աչքովնին տեսնել ու համոզուիլ:

Հաղիւ Պետրոս եւ Յովհաննէս մեկնած էին գերեզմանէն, երբ Մարիամ Մագդաղինացի վերադարձաւ հոն: Երբ գերեզմանին բռնորաբք կը պտըտէր, տեսաւ Յիսուսը. այնպէս կարծեց թէ պարսիզպանն է, եւ ըսաւ անոր.

— Տէ՛ր, եթէ դուն վերցուցած ես, ըսէ՛ ինձի, ո՞ւր դրած ես զայն, որ առնեմ:

— Մարիա՛մ, գոչեց Յիսուս:

— Օ՛, վարդապե՛տ, աղաղակեց Մարիամ:

— Գնա՛ կղբայրներուս եւ ըսէ անոնց. կ'ելնեմ ես դէպի իմ Հայրը ու ձեր Հայրը, դէպի իմ Աստուածը եւ ձեր Աստուածը:

ԽԹ. ԳԱՍ

ՅԻՍՈՒՍ ԷՄՄԱՌՒՍԻ ՄԷՋ

Այդ միեւնոյն օրը, երկու աշակերտները կ'երթային Էմմաուս անուն գիւղ մը, որ Երուսաղէմէն երկու մղոն հեռու էր: Անոնք երկուքը կը խօսակցէին վերջին երկու օրուան մէջ Յիսուսի պատահած դէպքերուն վրայ: Այն ատեն Յիսուս մօտեցաւ անոնց, բայց անոնք չճանչցան զայն: Ըսաւ անոնց. — Ի՞նչ բանի վրայ կը խօսակցիք եւ ինչո՞ւ տխուր էք:

Անոնցմէ մէկը, Կղեովպաս անուն, ըսաւ.
 — Երուսաղէմի մէջ դուն միայն կաս որ այս
 օրերս պատահածները չգիտես:
 Ապա պատմեցին թէ Յիսուս Նազովրեցին ի՛նչ



Յիսուս Էմմաուսի մեջ

դործեր ըրած էր, իրենք հաւատացած էին որ նա
 էր Մեսիան, բայց ան խաչուեցաւ և երեք օր է
 գերեզմանն է:

— Ո՛վ անմիտներ, ըսաւ Յիսուս, դուք չէ՞ք
 կարդացեր մարգարէները. Յիսուս այդ բոլոր նե-
 ղութիւնները պիտի կրէր փառաւորուելէ առաջ:

Ապա, սկսաւ մէկիկ մէկիկ մարգարէներէն
 փաստեր բերել ու համոզել զանոնք:

Գիւղին մօտեցեր էին. Յիսուս այնպէս ձեւա-
 ցուց, որպէս թէ աւելի հեռուն պիտի երթար: Ա-
 նոնք խնդրեցին որ այդ իրիկունն իրենց մօտ մնայ:
 Յիսուս ընդունեց, միասին սեղան նստան. առաւ
 հացը, օրհնեց ու սուաւ անոնց:

Այն ատեն անոնց աչքերը բացուեցան ու ձանչ-
 ցան: Յիսուս աներեւոյթ եղաւ: Անմիջապէս սեղա-
 նէն ելան, երուսաղէմ դարձան ու պատմեցին ի-
 րենց ընկերներուն: Անոնք ալ իմացուցին թէ Յի-
 սուս Պեարոսին ալ երեւցած էր և քաջալերած:

Ծ. ԿԱՍ



ՅԻՍՈՒՍ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Այդ իրիկունը երբ առաքեալները մէկտեղ հա-
 ւաքուած էին, յանկարծ Տէրը երեւցաւ ու ըսաւ.

— Խաղաղութիւն ձեզի:

Այս անակնկալ երեւոյթէն ա՛յնքան շփոթե-
 ցան, որ կարծեցին թէ սգի է տեսածնին:

— Ինչո՞ւ խոռվեր էք, ըսաւ Յիսուս: Մի՛ վախ-
 նաք. ես նոյնն եմ. շօշափեցէք զիս ու տեսէք. ո՛-

դին մարմին ու սակոր չունի, բայց կը տեսնէք թէ
ևս ունիմ:

Ապա ցոյց տուաւ ձեռքերուն ու սաքերուն
ձեղքերը: Անոնք աակաւին ապուշ դարձած կը զար-
մանային: Այն ատեն կերակուր ուղեց, խորոված
ձուկ ու մեղր դրին անոր առջև. կերաւ և մնացոր-
դը յանձնեց: Յետոյ սկսաւ Ս. Գիրքէն փաստերով
համոզել: Ամէնէն ետքը ըսաւ.

— Ինչպէս որ Հայրս զիս զրկեց, ևս ալ ձեզ
կը զրկեմ, դացէք քարոզեցէք:

Թովմաս մէջերնին չէր: Երբ յետոյ եկաւ և
պատմեցին, հաւատաց ու ըսաւ.

— Մինչև որ մասս կողը չկոխեմ, չեմ հաւատար:
Յաջորդ շարթուն դարձեալ յայտնուեցաւ Յի-
սուս: Թովմաս հոն էր: Յիսուս հրաւիրեց զայն և ըսաւ.

— Շօշափէ՛ վէրքերս և անհաւատ մի՛ ըլլար,
այլ հաւատացեալ եղիր:

— Տէ՛ր իմ և Աստուած իմ, գոչեց Թովմաս:

— Իսկն տեսար ու հաւատացիր, ըսաւ Յիսուս,
երանի՛ անոնց, որ չտեսած կը հաւատան:

ՄԱ. ԳԱՍ

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Հ Ա Մ Բ Ա Ր Զ Ո Ւ Մ Ը


Այնուհետև Յիսուս բազմաթիւ անդամներ և-
րեւցաւ իր աշակերտներուն և քաջալերեց զանոնք,
քարոզեց անոնց: Քառասուն օրեր այսպէս յայտ-
նուեցաւ անոնցմէ շատերուն:

Վերջապէս օր մը, զիրենք տուաւ և Չիթենեաց
լեռը տարաւ. հոն զիրենք օրհնեց, քաջալերեց և
յանձնարարեց որ իր Աւետարանը քարոզեն ամէն
կողմ. ապա սկսաւ համբառնալ:

Յանկարծ լուսաւոր ամպ մը եկաւ ծածկեց
զինքը: Երբ անոնք աչքերնին յառած շարունակ կը
դիտէին, իրենց երեւցան լուսաւոր թեւերով երկու
հոգիներ ու ըսին.

— Գալիլեացիներ՛ր, ի՞նչ կեցեր երկինք կը
նայիք. այն Յիսուսը, որ հիմա զձեզ թողուց, եր-
կինք ելաւ, նոյնպէս օր մը դարձեալ պիտի գայ:

Աշակերտները այս լսելով, երկրպագեցին ու
դարձան Երուսաղէմ: Անկէ ետքը շարունակ միա-
սին կ'ապրէին, անվախ կերպով կը քարոզէին Յի-
սուսի աւետարանը:



Յիսուսի Համբարձուիք

Պ Ե Ն Տ Ե Կ Ո Ս Է

Պենտեկոստի սօնը կը կատարենք Զասիկէն ճիշտ 50 օր ետքը: Ան յիշատակ է առաքելներու վերնասուներ հաւաքուելուն եւ Ս. Հոգիի գալստեան: Այդ պահանջով այս սօնը կը կոչուի նաեւ **ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ**:

Յիսուս իր յարուբեցնէն 40 օր ետք համբարձաւ իր առակերտներու ներկայութեան: Անոնց խոստացաւ միւրքարիչ Ս. Հոգին դրկել, որպէսզի քաջալերուին եւ Քրիստոսի կրօնը քարոզելով տարածեն:

Երբ անգամ մը Յիսուսի առաքելները եւ առակերտները հաւաքուած էին վերնասան մէջ, եւ Յիսուսի յարուբեան յիշատակը կը կատարէին, ամենքն ալ սկսան ներշնչուիլ եւ համարձակ քարոզել Քրիստոսի Աւետարանը:

Այդ միջոցին Երուսաղէմի մէջ աշխարհի ամեն կողմերէն ուխտաւորներ հաւաքուած էին: Արդէն Պատեֆի սօնէն մինչեւ Պենտեկոստէ՝ ուխտաւորները կը մնային Երուսաղէմի մէջ:

Այդպիսի ուխտաւորներու բազմութեան մը առջեւ Պետրոս առաքելը սկսաւ անվախ կերպով քարոզել: Յայտնեց թէ Յիսուս Հրեաներուն սպասած Մեսիան էր, որ աշխարհ եկաւ, սորվեցուց մարդոց նժմարիս կրօնը, խաչուեցաւ Հրեաներէն, քաղուեցաւ ու յարութիւն առաւ:

Անոր այս խօսքերը լսելով կը զարմանային եւ շատերը հաւատալով Քրիստոնեայ կ'ըլլային: Ահա այս դեպքին յիշատակն է **ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԻ ՏՕՆԸ**:

Ս. Ս Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս

Երբ Քրիստոս համբարձաւ, առաքեալները եւ բոլոր հաւատացեալները սկսան միասին ապրիլ, մեկեւոր աղօթել, մեկեւոր նաշել եւն.: Ուստի ընտրուեցան 7 սարկաւազներ կամ սպասաւորներ, որպէսզի առաքեալներուն օգնական ըլլան: Այդ 7 սարկաւազներէն մեկն էր Ս. Ստեփաննոս: Ան լեզուագէտ, խելացի եւ եռանդուն մեկն էր: Համարձակ կը քարոզէր Քրիստոսի Աւետարանը: Այդ պատճառով ունեցաւ բազմաքիւ բեմամիներ, որոնք գրպարեցին զայն եւ ըսին քէ Աստուծոյ դէմ հայնոյած է: Տարին Հրեաներուն մեծ դասարանը, եւ սկսան դասել:

Ս. Ստեփաննոս գեղեցիկ ու երկար հառ մը խօսեցաւ: Այդ հառի միջոցին ժողովուրդը պահանջեց որ զայն մահուան դատապարտեն. դատաւորներն ալ այնպէս ըրին:

Տարին զայն Երուսաղէմի պարիսպէն դուրս տեղ մը, եւ սկսան քարկոծել: Երբ սուրբին վրայ քարեր կը նետէին, ան աչքերը երկինք դարձուցած կը խնդրէր Աստուծոյ որ ներէ զինքը քարկոծողներուն:

Այսպէս, քարերու տակ աւանդեց իր հոգին:

Ս. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ս. Պօղոս ծնաւ Կիլիկիոյ Տարսոն քաղաքը: Կրթուեցաւ եւ լաւ յունարէն սորվեցաւ: Արհեստ մըն ալ սորվելու համար աւելի տեղաւ խորանակարի (չասքրնի) մօտ:

Իր ծնողքը զինքը զրկեցին Երուսաղէմ, ուր Գամաղիէլ անուն զիտուն մարդ մը կար. անոր քով ուսաւ Ս. Գիրքը եւ իր ազգին պատմութիւնն ու լեզուն:

Պօղոս կը կոչուէր նաեւ Սաւուղ կամ Սօղոս: Ան սկսաւ մեծ համբաւ վասկիլ: Զինքը կը սիրէին բոլոր մեծ Հրեաները: Սօղոս նախապէս կը հալածէր քրիստոնէականները: Ս. Ստեփաննոսը քարկոծողներէն մեկն ալ ինքն էր:

Քրիստոնէականները չարչարելու համար, օր մը Գամակոս զնաց: Ճամբան՝ լուսեղէն ամպի մը մէջէն, Քրիստոս երեւցաւ անոր եւ ըսաւ.

- Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ կը հալածես զիս:
- Ո՞վ ես, Տէ՛ր, հարցուց Սօղոս:
- Ես եմ Յիսուսը, զոր կը հալածես: Գուցէ իմ ընտրուած մարդն ես. ե՛լ եւ քարոզել իմ աւետարանը:

Պօղոս ելաւ. լոյսէն աչքերը կուրցած էին: Գնաց Դամասկոս, ուր քրիստոնէայ մը զինքը բժշկեց: Անկէ ետքը, Պօղոս դարձաւ առաքեալ: Ամեն տեղ կը քարոզէր եւ քրիստոնէութիւնը կը արածէր:

Շատ տեղ այցելեց. զնաց Փոքր Ասիոյ շատ մը քաղաքները, Անտիոք, Եփեսոս, Տրովազա, Իկոնիոն, Գադասիա: Այցելեց Թեսաղոնիկէ (Սելանիկ), Աթէնք, Երուսաղէմ: Մեծ վճանգներ անցուց, բանտարկուեցաւ, ծեծուեցաւ, չարչարուեցաւ, կապուեցաւ: Հրեաները ուղեցին զինքը սպաննել, կապեցին: Պօղոս կայսեր բողոքեց. կապուած տարին զինքը Հռոմ. ազատ արձակեցին: Բայց յետոյ Ներոն կայսեր ժամանակ բռնուեցաւ եւ սպաննուեցաւ Հռոմի մէջ:

Պօղոս գրած է բազմաքիւ նամակներ իր աշակերտներուն եւ հաւատացեալներուն:

ՈՒՍՈՒՅՉԻ ԲԱԺԻՆԸ

Ա. ՉԱՔԱՐԻԱՅԻ ԱԻԵՏՈՒՄԸ. — Հարկ է յիշել նման դէպքերը (Աբրահամի և Սառայի, Սամուէլի մօր ևն. աւետուհիները) Աբրահամ հաւատաց Աստուծոյ, մինչ Չաքարիա՝ ո՛չ: Թերահաւատութիւնը կը պատժուի: Իբր զարդացման ծանօթութիւններ՝ քարտէսի վրայ ցուցնել Հրեասան = Յուդայի երկիրը, Խնկոց Սեղանի մասին վերջիչել Սրբազան Պատմութեանէն աղոյց արդէն ունեցած ծանօթութիւնները:

Բ. ՄԱՐԻԱՄԻ ԱԻԵՏՈՒՄԸ. — Բաղդատել Չաքարիան Մարիամին հետ. Մարիամ համեստ, աղքատ, բարի կոյս մը՝ կը հաւատայ, մինչ Չաքարիա թերահաւատեր էր: Իբրև զարդացման բաժին՝ քարտէսի վրայ ցուցնել Նազարէթ, Գալիլիան: — Վեր առնելիք գաղափարներ. ա) Աղքատութիւնը ոչ առաքինութիւն է, ոչ մտլութիւն, դժբախտութիւն միայն, բ) Աղքատներուն մէջ կը գանուին սրտով հարուստներ. «Երանի աղքատաց հոգևով, զի նոցա է արքայութիւն երկնից», գ) Հեղութիւնը և խոնարհութիւնը մեծագոյն առաքինութիւններն են. «Ես յո՞ հանդեաց, եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս», դ) Աստուած կը կատարէ իր խոստումը (Աբրահամէն սկսեալ տրուած շատերուն):

Գ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ. — Յիշել Հրէից սովորութիւնը՝ ութերորդ օրը անունը դնելու. ընդհանրապէս տան մեծերը կը դնէին մանկան անունը, — Չաքարիա խրատուած է. հաւատքը զօ-

րացած՝ մարդարէութիւն կ'ընէ: — Անապատական կեանքի մէջ ճգնութիւն ընել տարածուած էր Յիսուսի ժամանակ. առանձնութեան մէջ կը պատրասուէին քարոզութեան. նոյնպէս՝ Յովհաննէս:

Դ. ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ. — Օգոստոս կայսեր, անոր մայրաքաղաքի մասին ծանօթութիւններ: Տեղական աշխարհագիրը յաճախադէպ էր այդ ատեն: Ինքնիշխան զարտէսի վրայ: Յիսուսի ծնողքը աղքատ էին: Յիսուս կը ծնի ո՛չ սրպէս թագաւոր, այլ սրպէս աղքատ մանուկ: Բայց անոր խոնարհ ծնունդը մեծ նշանակութիւն ունի. խաղաղութեան վարդապետն է ան:

Ե. ՄՈԳԵՐՈՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ. — Մեսիայի մը գալստեան գաղափարը տարածուած էր Արեւելի մէջ: Հերովդէս առաջին օտարազգի էլ յասան է Հրէից, ուստի կը վախնայ: Մեքենայութիւն կը նիւթէ, բայց չի յաջողիր: Մոգերը իրենց հպատանութէ, բայց չի յաջողիր: Մոգերը իրենց հպատանութեան հարկը կը մատուցանեն: — Վեր առնելիք գաղափար, ա) Քրիստոսի եկեղեցին չի ջնջուիր իր դէմ ելած արգելքներէն, բ) Առաքինութիւնը միշտ կը յաղթանակէ:

Զ. ՅԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ. — Եգիպտոսի անգերանիկներուն սպաննութեան իբրև յիշատակ, Իսրայելի ամէն անգերանիկ արու Աստուծոյ կը նուէրօուէր: Ընծան էր՝ գառ մը ողջակէզի համար, աղօքառները կրնային տանիլ երկու տասնակ (Ղեւտ. ԺԲ. 6—8): Մարիամ և Յովսէփ աղքատի նուէրը կուտան:

Սիմէոն մէկն էր այն 72 ուրբերներէն, որ 275 (Ն. Բ.)-ին Հին կտակարանը յուշարէնի թարգմանեցին: Սիմէոն կարգաւորով Մեսիայի գալստեան մասին

մարդարէններուն զրածները, կը բազմայ ականատես
ըլլալ ու սղջ կը մնայ, ապրիլով չուրջ 300 տարի:

է. ԵԳԻՊՏՈՍ ՓԱՆՈՒՍՏԸ. — Հերովդէս մարդա-
պան է: Պատմութիւնը կը հաստատէ թէ չարաչար
մահ մը սենեցաւ ան (սրբնալից եղաւ): — Բեթզե-
նէմի մանուկները քրիստոնէութեան առաջին զոհերն
են. առանց զոհի արդիւնք չկայ, առանց զոհի դա-
ղափար չի տարածուիր:

Ը. ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ. — Յիսուս մանկու-
թեանէն իսկ կը սիրէ Աստուծոյ տաճարն ու աստուա-
ծային խօսքերը, չուզեր հեռու մնալ անոնցմէ: —
Յիշել Եբրայեցւոց սովորութիւնները ուխտաւորու-
թեան մասին, խմբով երթալ գալը: — Հրէից մէջ
12 տարեկան ազան չափահաս կը նկատուէր. ուրեմն
Յիսուս անհնազանդ մը չէր:

Թ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿԻՐՏԻՉ. — Հարկ է ծանրանալ
և նոր ծանօթութիւններ տալ աշակերտներուն Յոր-
դանան դեռի, Փարիսեցիներու և Սառուկեցիներու մա-
սին: — Յովհաննէս անկաշառ, աներկիւղ քարոզիչ
մըն է: — Կ'սեննայ իրեն աշակերտներն ու հեռե-
ւորները:

Ժ. ՅԻՍՈՒՍԻ ՄԿԻՐՏՈՒԹԻՒՆԸ. — Զուրը նկատ-
ուած է իբրև մաքրիչ: Յովհաննէս կը մկրտէր իր
հեռեւորները ի նշան մաքրութեան և վերանորոգու-
թեան: Յովհաննէս կը ճանչնայ Յիսուսը և համես-
թեամբ կը մերժէ մկրտել: — Հին քահանայապետնե-
րը և քահանաները կը մաքրուէին, կը լուացուէին
պաշտօնի ձեռնարկելէ առաջ: Յիսուս հանդիսաւոր
կերպով կը մանէ իր պաշտօնին մէջ: — Յիսուս կ'ա-

ղօթէ և երկիրնք կը բացուի. աղօթքը միշտ կը բա-
նայ երկիրնքը:

ՃԱ. ՅԻՍՈՒՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ. — Յիսուս ալ կը
պարտասուի իր մեծ գործին համար: Մարդոց առ-
ջև դրուած է բարին ու չարը. չարէն հեռանալ և
բարին ընտրել իրենց կամքին ձգուած է:

ՃԲ. ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ. — Յի-
սուսի առաջին աշակերտներէն կ'ըլլան Յովհաննէսի
աշակերտները և համեստ զբաղումով մարդիկ (ձըկ-
նորս): Յուցնել Նաբանայիի հաւատաքը, Փիլիպպոսի
անկեղծ նուիրումը: Պետրոս աշխատաւոր մէկն էր:
հեղ, անձնուէր և հաւատաւոր մէկն էր:

ՃԳ. ԿԱՆՅԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ. — Զուրը գինիի
դարձնելէն աւելի մեծ հրաշք է միլիոնաւոր մարդոց
սրտերը դէպի բարին փոխելն ու առաջնորդելը: —
Յիսուս չի մերժեր ուրախութիւնը, վայելքը: Յար-
մար ասեն մարդոց ուրախութեան կը մասնակցի:
Ան ճգնաւորութիւն չի քարոզեր, այլ կեանքի մէջ
սուրբ և անարատ ապրել:

ՃԴ. ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԸ ԿԸ ՄԱՔՐԷ. — Յիսուս
հոս Յովհաննէսի յիշած գառնուկը չէ, այլ արդար
գայրոյթով լեցուն մէկը. նախանձախնդիր Աստու-
ծոյ տաճարին սրբութեան:

ՃԵ. ՅԻՍՈՒՍ ԵՒ ՍԱՄԱՐՍԻ ԿԻՆԸ. — Յիսուս
սովոր էր իր մօտը գտնուած կամ իր ականացիներէն
օրինակ առնել և քարոզել: Զրհուրին քով աղբիւրին
ջուրը օրինակ կը բերէ. կենդանի ջուրը իր վար-
դապետութիւնն է: Սամարացի կինը չուտով համոզ-
ուեցաւ և հաւատաց Յիսուսի. անչուշտ անոր հաւա-
տացող կիներէն մէկը դարձաւ յետոյ: — Յիսուս Հըր-

եաներու անձկամտութիւնը չունի, կ'ուզէ ջնջել ազգամիջեան ատելութիւնները: — Ճշմարիտ երկրպագութիւնը կապուած չէ տաճարին տեղին ու դիրքին, այլ երկրպագողի սիրան ու մաքրութիւնն է կարեւոր:

ԺԶ. ՆԱԶԱՐԷԹԻ ՔԱՐՈՉՈՒԹԻԻՆԸ. — Նկարագրել Հրէից Սինակոկներն ու սովորութիւնները: Սինակոկները ժողովարաններ էին, ուր Շաբաթ և տօնօրեր կը հաւաքուէին, ժողովրդապետք կամ նախագահը պաշտամունքը կը վարէր. ներկաներէն փափաքողը կը կարգար Հին կաակարանէն կտոր մը և կը մեկնէր: Յիսուս նոյնը կ'ընէ: Ան կը յայտնէ ինքզինքը որպէս Մեսիա: — Մարդիկ յաճախ անձերը կը դատեն անոնց ծագումը նկատի առնելով, ինչ որ սխալ է: — Իսրայելացիք Մեսիայի մասին սխալ գաղափար ունէին. անոնց կարծիքով, ան պիտի գար, թագաւոր պիտի ըլլար, իսկ Հրեաները պիտի իշխէին միւս բոլոր ցեղերուն:

ԺԷ. ՀՐԱՇԱԼԻ ԶԿՆՈՐՍՈՒԹԻԻՆԸ. — Նկարագրել կափառնամուժը և Գեճճեսարէքի ծովը, անոյ ջրուր, ձկնաշատ: — Պետրոս կը յայտնուի հնազանդ հաւատացող: — Հասարակ ձկնորսութենէ քարոզչութեան պատիւին կը բարձրանայ ան՝ շնորհիւ իր բարի յատկութիւններուն:

ԺԹ. ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻՆ ԲԺՇԿՈՒԹԻԻՆԸ. — Այս հրաշքը պէտք է ծառայեցնել իբր միջոց աշակերտներուն մէջ արթնցնելու հետեւեալ գաղափարները. ա) հաւատքը միշտ կը վարձատրուի, բ) Փարիսեցիական կեղծաւորութիւնն ու խճրճանքը կը պախարակէ Յիսուս, գ) Յիսուս կը պահանջէ որ զինքը ճանչ-

նան իբրև Մեսիա, թշուառներուն, տառապողներուն բարեկամ. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանդուցից զձեզ», դ) Յիսուս կը պահանջէ իր հետեւողներէն որ նոյնպէս վարուին: «Երանի որ որմածաց, զինքա ողորմութիւն գտցեն»: «Բարի արարէք տակեաց ձերոց»:

Ի. ՀԱՐԻԻՐԱՊԵՏԻՆ ԾԱՌԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏԻՆ ԱՂԶԻԿԸ. — Այս հրաշքները նոյնպէս պէտք է ծառայեցնել իբրև միջոց ֆրիստոսի քարոզած գաղափարները ճանչցնելու, կրկնելով նախորդ դասին մէջ յիշուած սկզբունքները:

ԻԱ. ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆԻՆ. — Յիսուս գթութեան վարդապետն է. Ան եկաւ սրբելու որբին արցունքը, սփոփելու տառապողներուն վիշտերը, մխիթարելու սղաւորները. «Երանի սղաւորաց, զինքա մխիթարեսցին»:

ԻԲ. ԲԵԹ ՀԵԶՂԱՅԻ ԲԺՇԿՈՒԹԻԻՆԸ. — Բեթհեզղայ կամ Բեթհազղայ կը նշանակէ Տուճ Հիւանդաց: Նկարագրել այդ շէնքին ներքին մասը. աւազան, բոլորաիքը կամարակապ սրահներ: — Անդամալոյծը լսած էր անուշա Յիսուսի մասին. խոր հաւատք ունէր Յիսուսի նկատմամբ. իր հաւատքը օգնեց իրեն: — Փարիսեցիներուն, դպիրներուն ծայրայեղ ծիսամուրթիւնը ցուցնել. Շաբաթ օր բժշկելը մեղք կը սեպեն. բարեգործութիւնը ոչ մէկ ատեն մեղք է:

ԻԳ. ՄԱՏԹԵՈՍ ԵՒ ՄԻԻՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ. — Յիսուս հարուստներէն ալ իրեն աշակերտ կ'ընտրէ, որպէսզի չըսուի թէ անոր աշակերտները ամէնքն ալ խեղճ անձեր են: Յիսուս չի քաշուիր զինքը ցուցնելէ որպէս բժիշկ հիւանդաց, հովիւ հօտերու, մխի-

քարիչ սգաւորաց ևն. : — Ամէն անգամ երբ լուրջ գործ մը ունի կատարելիք, Յիսուս նախ կ'ազօթէ : Ազօթքը մարդոց համար ուղիղ ճամբայ ցուցնող միջոցն է. մարդուն ներքինը կը զօրացնէ, կը քաջալերէ իր դժուարութիւններուն մէջ :

Ին. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՁԻ ՄՍՀԼ. — Յուցնել Հերովդէտի ապականուած բարքը, Յովհաննէտի անվեհեր, աներկիւղ սգին : Անոր կեանքը սկիզբէն մինչև վերջ եղած է մարդոց յանցանքներուն յանդիմանութիւնը : Յուցնել նաև Հերովդիայի մեղսակցութիւնը. ան պէտք չէր իր օրինաւոր ամուսինէն հեռանալ : — Յովհաննէտի առաքինութիւններն ևն. : ա) Անկեղծութիւն, բ) Անձնութեան պարզութիւն, գ) Եւրոպայի մարդկային ներքին մաքրութեան : Արդար, անբիծ մարդը կը ճառագայթէ, ձիւնէն աւելի ճերմակ (մաքուր), արևէն աւելի փայլուն (չքեղ) կերպով : Յիսուսի աստուածային մաքրութիւնը փայլեց իր վրայ. աշակերտները սեռան : — Մովսէս և Նդիա Հին Ուխտի մեծ դէմքերը սեռանուեցան անոր մօտ. Աստուած անգամ վկայեց : — Հրեաները Երուսաղէմի մէջ սպաննել կ'ուզէին. Պետրոս կ'առաջարկէ չհրթալ Երուսաղէմ, այլ մնալ հոն՝ երեք տաղաւարներու մէջ : Յիսուս չի փախչիր չարչարանքէն :

ԻԸ. ՅԻՍՈՒՍ ԿՕՐՀՆԷՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ. — Մասունկները կ'ըլլան անմեղ, բարի, խոնարհ : Անոնց այդ յատկութիւնները կը սիրէ Յիսուս և կը պատուիրէ իր աշակերտներուն անոնց պէս ըլլալ, հեղ, խոնարհ, անմեղ և բարի :

ԻԹ. ԱՆԱՌԱԿ ՈՐԳԻՆ. — Կրտսեր որդին ասկէ քախտ է, անհնազանդ, շուայա և ցոփ : Կը զղջայ ու կը դառնայ : Հայրը ներողամիտ, համբերող, գթած է : — Այս առակը պէտք է մեկնել. Հայրը՝ Աստուած է, որդիները՝ մարդիկ ևն : Աստուած յանցաւորներուն կը թողու որ իրմէ հեռանան, որովհետև բոնի հնազանդութիւն չի սիրեր : — Զարգացման բաժին : Խոզը պիղծ կենդանի էր Հրէից մէջ և սոսկալի անպատուութիւն էր խոզարած ըլլալ : — Արդար-ները (երէց որդի) Աստուծոյ նման պէտք է սերտ-խոնարհ իրենց կորսուած եզրօր դարձին վրայ : Լ. ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՁԽՍՐԸ. — Աստուծոյ անսահման սէրը դէպի մարդիկ : — Ինչո՞ւ թոյլ կուտայ Աստուած որ մարդիկ հեռանան իրմէ, Աստուած չուզեր բռնանալ մարդոց ազատութեան, ազատ կամքին վրայ. յիշել նախորդ առակը :

ԼԱ. ՄԵԾԱՏՈՒՆԸ ԵՒ ՂԱԶԱՐՈՍԸ. — «Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գացին» : Հարստութիւնը չանարդեր Յիսուս, բայց կ'անարդէ այն հարուստները որ եսասէր ևն, որ չեն ուզեր օգնել թշուառին, աղքատին : Ողորմիլը միայն դրամ անել թշուառին, ողքատին : Ողորմիլը օգնել, նուիրել ըսել է : Ետալով չըլլար. ողորմիլը օգնել, նուիրել ըսել է : Երանի կուտայ ուրեմն այն ողորմածներուն, որոնք ծուլութիւնը չեն քաջալերեր, կը գթան, կ'ողորմին :

ԼԲ. ՓԱՐԻՍԵՅԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐԸ. — Յիսուս կը պախարակէ Փարիսեցիներուն հպարտութիւնը, գոռոզութիւնը, կեղծաւորութիւնը և ցուցամուլութիւնը : Փարիսեցիին ինքզինքը կը գովէ, ինքնագով մըն է Աստուծոյ առջև, իր ազօթքը զղջում մը չէ. մինչ

մաքսաւորինը զըջոււմ է: Աղօթքին մէջ մարդիկ պէտք է ըլլան խոնարհ, անկեղծ, հեղ:

ԼԳ. ԱՅՐԻ ԿՆՈՋ ԵՐԿՈՒ ԼՈՒՄԱՆ. — «Մարդ հայի յերեսս և Աստուած հայի ի սիրտ»: Շատեր նըւէրներ կուտան իրենց յաւելուածէն, մարդոց մէջ երեւնալու, փառաւորութիւն համար: Հարուստները իրենց աւելորդէն կուտան, մինչ հասարակ ժողովուրդը իր տասնոցներով աւելի տուած կ'ըլլայ: Յիսուս հարուստներու տուածը չանարդեր, այլ կը հրաւիրէ զանոնք որ առատաբարութեամբ նուիրեն. «Աջ ձեռքիդ տուածը ձախը թող չիմանայ»:

ԼԵ. ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ. — Ամէնէն աւելի պէտք է ծանրանալ հետեւեալ գաղափարներուն վրայ. ա) Յիսուս անձնուէր ու սիրող բարեկամ մըն է. բ) Այս կեանքէն զատ հոգեկան կեանք մը կայ, հոգիի անմահութիւն մը կայ, որուն պէտք է հաւատանք. գ) Յիսուս կ'ուզէ իր փառքը ցուցնել այս գործով: — Իբրև զարգացման բաժին կարելի է Հրէից գերեզմաններու մասին ծանօթութիւններ տալ: Անոնք գեանի մէջ՝ կոնակի վրայ պտոկած չէին դներ դիակները. անոնց գերեզմանները ընդհանրապէս ժայռի մէջ փորուած խուցերու կը նմանէին:

ԼԶ. ՉԱՔԷՆՈՍԻ ՀԱՒԱՏՔԸ. — Բաղդաստել Զաքէոսն ու Մատթէոսը. ցուցնել անոնց հաւատքը. Յիսուս մեղաւորները կը փնտռէ: Կորուսեալ ոչխարը փնտռող հովիւն է:

ԼԷ. ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԿԸ ՄՏՆԷ. — Ծանրանալ այն կէտի վրայ որ Յիսուսը կալանաւորելու որոշում տրուած է արդէն. Յիսուս գիտէ, բայց դար-

ձեալ անձնուիրութեամբ կը դիմէ Երուսաղէմ՝ քարոզելու համար: — Մէկ անգամ միայն Յիսուս թոյլ կուտայ որ ժողովուրդը արտայայտէ իր յարգանքը և փառաբանութիւնը. ան կ'ուզէ զգեցնութիւն գործել Երուսաղէմ հաւաքուած ուխտաւորութեան վրայ: Յիսուս կը յայտնէ ինքզինքը որպէս Մեսիա:

ԼԸ. ԿՍՅՍԵՐ ԴՐԱՄԸ. — Յիսուս ծուղակը չիյնար: Ան կը հաշտեցնէ աշխարհիկ իշխանութիւններու և Աստուծոյ հանդէպ մարդոց ունեցած պարտու և Աստուծոյ հանդէպ մարդոց ունեցած պարտութիւնը կամ կը բաժնէ զանոնք: — Յիսուսի թագաւորութիւնը հոգեւոր է, սիրտերու թագաւորութիւն է և ո՛չ թէ աշխարհային:

ԼԹ. ՏՍՍԸ ԿՈՅՍԵՐՈՒ ԱՌԱԿԸ. — Իբր զարգացման բաժին՝ ծանօթացնել աշակերտներուն Հրէից հարսանեկան սովորութիւնները, որոնցմէ օրինակ կ'առնէ Յիսուս իր առակը պատմելու համար: — Յայկ'առնէ Յիսուս իր առակը պատմելու համար: ա) Արքնութիւն հուսուն դարձնելիք գաղափարներն. բ) Անմահութեան կամ գեւոր փրկութեան համար. գ) Վարձատրուհանդերձեալ կեանքի ըմբռնումը. դ) Վարձատրուհանդերձեալ կեանքի ըմբռնուածը. զ) Վարձատրութիւն և պատիժ նաև բարոյական գործերու համար: Մարդիկ այս աշխարհի մէջ իսկ կը ստանան իրենց վարձատրութիւնն ու պատիժը (խղճի գոհունակութիւն, խղճի խայթ ևն.):

Խ. ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻԲԸ. — Իբր զարգացման բաժին՝ յիշել Հրէից սովորութիւնները Պաւլի աօնին նկատմամբ (բաղարջ հաց ուտել, դառն՝ ոսկորները առանց կտարելու, օրհներգ սեղանին վրայ, սեղանին վրայ գտնուող մեծին կողմէ հացն ու գինին բաշխուելու ևն.): Յիշել նաև արեւելքի հին մէկ սովորութիւնը՝ հիւրերուն ոտքը լուալու: — Յիսուս խո-

նարհութեան, մաքրութեան, անձնուիրութեան գա-
ղափարները կ'ուզէ արմատացնել: — Զղջման կը
հրաւիրէ Յուզան, բայց անօգուտ: — Նկարագրել
Յուզայի հոգեկան խոտվքը, ներքին յայզկըը, մո-
լուծիւնները (արծաթսիրութիւն, եսասիրութիւն):

ԽԱ. ՅԻՍՈՒՄ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԷՂԻՆ ՄԻՋ. —
Իբր զարգացման բաժին յիշել Գերսեմանի պարտէզին
դիրքը և տեղը (Չիթենեաց լեռան և Երուսողէժի
միջև, լեռան ստորոտը. ձիթենիներու ընդարձակ
պարտէզներ կան հոն մինչև հիմա): — Յիսուս կը
խոտվի ա) զգալով քիչ աստեղէն իրեն արուելիք չար-
չարանքն ու մահը, բ) զգալով իր աշակերաներուն
ցրոււմը և ուրացումը: (Անոնք յաղթական և զօրեղ
Մեսիայի մը կը սպասէին): — Յուզա կը համբուրէ.
բարեկեցութեամբ սովորական ձեւն էր ասիկա:

ԽԲ. ՅԻՍՈՒՄ ԴԱՏԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ. — Աճ-
նա էր քահանայապետ Կալիափայլ ատաջ (25—36),
որ Աճնայի փեսան էր: Աննա մեծ ազդեցութիւն ու-
նէր, թէև բուն քահանայապետը Կալիափան էր: —
Յիսուս լուս կը մնայ իր դէմ եղած բոլոր զրպար-
տութիւններուն, դիտնալով որ ինքզինքը արդարա-
ցնել անօգուտ է այդպիսի ասեանի մը ատջև. Կա-
լիափայլի երգումին վրայ խօսեցաւ Յիսուս ճշմար-
տութիւնը: — Յիսուս անիրաւ յարձակումին դէմ կը
բողոքէ և կը պաշտպանէ ինքզինքը. բողոքն ու
ինքնապաշտպանութիւնը մարդուն իրաւունքն են:

ԽԳ. ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆԸ. — Երկու զըզ-
ջումները (Պետրոսի և Յուզայի) տարբեր են. մէկը
իբրայէս զղջում է, միւսը՝ յուսահատութիւն:

ԽԴ. ՅԻՍՈՒՄ ՊԻՂԱՏՈՍԻ ԵՒ ՀԵՐՈՎԻԷՍԻ ԱՌ-
ՋԵԻ. — Հրէաստանի կառավարիչ եղաւ Պիղատոս, 26
—36: Անոր նկարագիրը կը ցույցայ Յիսուսի անմե-
ղութիւնը կը հասկնայ և կը յայտարարէ, բայց քա-
ջութիւնը չունենար արդարութիւնը գործադրելու:

ԽԵ. ՅԻՍՈՒՄ ԶԱՐՉԱՐԱՆԻՐԸ. — Շեշտել մանա-
ւանդ այն պարագան որ Յիսուս յանձն կ'առնէ չար-
չարուիլ ուրիշներուն համար, գաղափարի մը համար:
Անձնուիրութիւն, հերոսութիւն է աս:

ԽԶ. ՅԻՍՈՒՄ ԽԱՋԵՆՈՒԹԻՒՆԸ. — Խաջելու-
թեան մասին՝ իբրև մահու պատիժ, հարկ է մանրա-
մասն ծանօթութիւններ տալ սղոց: Խաջը հասարակ
մահու գործիք, խաջի զանազան ձևերը ցուցնել,
երբեմն հակառակ դարձած. խաջը ստորուկներու հա-
մար՝ անարգ մահ, երկար չարչարանքներ, մինչև 7
օր սղջ կը մնային, խաջի վրայ կը փռէին՝ թոչուն-
ներու և զազաններու կեր: — Յիշել Յիսուս խաջին
վրայ որպէս ներսողովա, «Հա՛յր, թո՛ղ դոցա»:

ԽԷ. ՅԻՍՈՒՄ ԹԱՂՈՒՄԸ. — Թաղումը կ'ըլլայ
հարուստի: Թաղման սովորութիւններու մասին ծա-
նօթութիւններ տալ անհրաժեշտ է:

ԽԸ. ՅԻՍՈՒՄ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ. — Մասնաւորա-
բար կը յանձնարարուի Պետրոսին տեղեկացնել Յի-
սուսի յարութիւնը, որովհետև Պետրոս ուրացումէն
ետք սկսեր էր յուսահատիլ ու քաշուիլ:


ԽԹ. ՅԻՍՈՒՄ ԷՄՄԱՆՈՒՄԻ ՃՍՄԲՈՒՆ ՎՐԱՅ. —
Աշակերանները յուսահատած են և տխուր. Յիսուս կը
քաջալերէ զանոնք: Կը լուսաւորէ Մեսիայի նկատ-
մամբ անոնց մութ ըմբռնումները: — Մեղմէ չատե-

բը վայրկեաններ կ'ուսննան յուսահատութեան ու տարակոյսի, բայց մեր սիրտերուն մէջ յաճախ կը յայտնուի Յիսուս:

Ծ. ՅԻՍՈՒՍ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ ԱՇՍԿԵՐՏՆԵՐՈՒՆ. — Թողմաս անհաւատ չէ, այլ թերահաւատ: Յիսուս չի պատժեր զայն (Զաքարիայի նման), որովհետեւ Թողմաս կը հաւատայ ի վերջոյ: Յիսուս չի ժխտեր մարդուն իրաւունքը բնեւէլու, ապա բնդունելու:

ԾԱ. ՅԻՍՈՒՍԻ ՀՍՄԲԱՐՉՈՒՄԸ. — Յիսուս կը վերանայ, մարդոց աչքերը դէպի վեր, դէպի բարձրը դարձնելու համար: Մարդոց իտէալն է Յիսուս, որուն պէտք է նմանին ամէն կերպով:

ԸՆԴԻՉ. ԾԱՆՍԹ. — Տօներու եւ առաքեալներու մասը սրուած է իբրեւ մանրամասնութիւն ծանօթութիւններ: Մասնաւորաբար Պօղոսի կեանքը կարելի է մանրամասն պատմել, հետաքրքրական կէտերը վեր առնելով, ինչպէս Սելանիկի բանքը, Արեմի հաւը, Իկոնիոնի բրածեծութիւնը, Մալքայի օձը եւն. եւն.:



367

002 6514
2013



<< Ազգային գրադարան



NL0026514


In. 0

ԳԷՈՐԳ ՄԵՍՐՈՊ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Տարական Ա.	25 դրուց
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Տարական Բ.	30 ”
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Միջին Ա.	45 ”
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Միջին Բ.	45 ”
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Ա. Հասոբ	70 ”
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Բ. Հասոբ	130 ”
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Համառոտ	40 լէվա

ՄԱՇԹՈՑ

ԿՐՕՆԻ ԳԻՐԲ Ա. Հին Ուխտի	25-20 լէվա
ԿՐՕՆԻ ԳԻՐԲ Բ. Յիսուսի Կեանքը	30 լէվա



ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ

ԳՐԱՏՈՒՆ “ՄԵՍՐՈՊ,”

Բավլովօ, Սոֆիա (8)

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Librairie “ M e s r o b ,”

Pavlovo, Sofia (8)

Bulgarie

Տպագր. — “ՄԱՍԻՍ” գողոց վեպէց 18, Սոֆիա

Handwritten signature